

Ֆինանսավորվել է Եվրամիության կողմից

հետազոտությունը իրականացվում է
ՔՀՖ Հայաստանի ազգային պլատֆորմի քարտուղարության
«Աջակցություն ՀԱՊ աշխատանքային խմբերի գործողություններին»
ծրագրի շրջանակում

հետազոտություն իրականացնող՝
Մեդրակյան Սարգիս
«Ֆերմերային Շարժում» ՀԿ
ԵՍ Ալֆ ՔՀՖ ՀԱՊ ԱԽԶ

հետազոտության անվանումը

«Պարենային անվտանգության ապահովման խնդիրները ՀՀ –ում»

1. Հետազոտության նկարագիրը և հիմնավորումը

Սույն հետազոտությունը արվել է հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետությունում գյուղական աղքատության կրճատման, երկրի պարենային ապահովության, գյուղերից արտագաղթի կանխման և երկրում գյուղատնտեսության զարգացման անհրաժեշտությունը:

Հետազոտությունով նախատեսվում է իրականացնել հանրապետության գյուղացիական տնտեսություններից պարենամթերքի ստացման, ինչպես նաև հանրապետությունից պարենամթերքի արտահանման և հանրապետություն պարենամթերքի ներմուծման վերաբերյալ հետազոտություններ, պարզել Հայաստանի Հանրապետությունում պարենի առկայության և օգտագործման ուղղությունների վերաբերյալ համապարփակ տեղեկատվություն, դրա համապատասխանելիությունը բնակչության 1 շնչին ընկնող միավոր սպառողական զամբյուղին, իրականացնել համադրություններ և վերլուծություններ, ներկայացնել երկրի պարենային ապահովվածության հիմնական բաղադրիչի, այն է՝ երկրի պարենամթերքի ներքին արտադրության ծավալները շատացնելու վերաբերյալ հիմնարար առաջարկություններ:

Հետազոտության իրականացման համար հավաքվում է (վերծանվում է) անհրաժեշտ տվյալների բազա (տվյալների բանկ), կազմվում է համապատասխան տեղեկատվական աղյուսակներ, իրականացվում է համապատասխան համեմատություններ, վերլուծություններ, գնահատումներ և ստացված արդյունքների

հիման վրա ներակայացվում են հիմնախնդրի (պարենային ապահովության) բարելավմանը ու կատարելագործմանը նպատակաուղղված առաջարկություններ: Հետազոտությունը իրականացվում է հիմնականում Արմատատի տարբեր տարիների տարբեր վիճակագրական տվյալների և տեղեկատվության այլ աղբյուրների հիման վրա: Բացի Արմատատից, հետազոտության նպատակով, տեղեկատվության աղբյուր են հանդիսանում նաև վարչական ռեգիստր հանդիսացող ՀՀ էկոնոմիկայի նախարարության, ՀՀ եկամուտների կոմիտեի մաքսային ծառայության կողմից ներկայացվող տեղեկությունները:

Հետազոտությունը նախատեսվում է օգտագործել երկրի ագրարային քաղաքականության և զարգացման ռազմավարական ծրագրերի մշակման գործընթացներում, ինչպես նաև՝ այն կարող է օգնել ՀՀ իշխանություններին երկիրը հանել ներկայիս ճգնաժամային իրավիճակից:

Հետազոտության իրականացումը կնպաստի երկրում գյուղական աղքատության և արտագաղթի կրճատմանը, գյուղերի և գյուղատնտեսության զարգացմանը, գյուղերում ապրելու և աշխատելու համար նորմալ պայմանների ստեղծմանը, ԵՄ ԱլԳ ՀԱՊ որոշ նպատակների իրականացմանը:

Հետազոտության իրականացումը բխում է՝ երկրի զարգացման ռազմավարությունից, պարենային անվտանգության համակարգի զարգացման ռազմավարությունից և 2023 - 2026 թվականների գործողությունների ծրագրից, ԱլԳ ՔՀՖ ՀԱՊ ԱԽ 2 –ի սահմանած առաջնահերթություններից, համապատասխանում է ԱլԳ ՔՀՖ ռազմավարությանը, համահունչ է ԵՄ – Հայաստան համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրին (ՀՀԳՀ) և ԵՄ 2018 – 2020թթ Հայաստանի քաղաքացիական հասարակության ներգրավման ԵՄ ճանապարհային քարտեզին:

2. Պարենային անվտանգության ապահովման խնդիրները ՀՀ –ում

Պարենային անվտանգության ապահովումն ազգային անվտանգության կարևորագույն բաղադրիչներից է:

Այն կարևորվում է, ինչպես միջազգային, այնպես էլ Հայաստանի Հանրապետությունում ընդունված բազմաթիվ իրավական ակտերով, որոնցից կարելի է առանձնացնել.

- ✓ Մարդու Իրավունքների Հռչակագիրը,
- ✓ ՄԱԿ-ի Հազարամյակի Զարգացման նպատակները,
- ✓ «Պարենային անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքը,
- ✓ «Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ռազմավարությունը»,
- ✓ «Հայաստանի Հանրապետության պարենային անվտանգության ապահովման հայեցակարգը»,
- ✓ «Հայաստանի Հանրապետության գյուղի և գյուղատնտեսության 2018-2025 թվականների զարգացման ռազմավարությունը»,
- ✓ Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի դեկտեմբերի 1-ի N48 արձանագրային որոշմամբ հավանության արժանացած «Հայաստանի Հանրապետության պարենային ապահովության հայեցակարգից բխող միջոցառումների 2017-2020 թվականների ծրագիրը»:

Պարենային անվտանգության բնագավառում համակարգված քաղաքականություն իրականացնելու նպատակով 2011 թվականի Հայաստանի Հանրապետության Նախագահի մայիսի 18-ի N ՆԿ-91-Ն կարգադրությամբ հաստատվել է «Հայաստանի

Հանրապետության պարենային անվտանգության ապահովման հայեցակարգը», որի նպատակն է ապահովել բնակչության բոլոր խմբերի համար առողջապահական նորմերին համապատասխանող սննդամթերքի ֆիզիկական ու տնտեսական մատչելիությունը, ինչպես նաև նախադրյալներ ստեղծել դիմակայելու ներքին ու արտաքին շուկայի անբարենպաստ փոփոխություններին և հնարավոր արտակարգ իրավիճակների բացասական հետևանքներին:

2.1.«Հայաստանի Հանրապետության պարենային անվտանգության ապահովման հայեցակարգի» հիմնական խնդիրներն են՝

- ✓ ագրոպարենային համակարգի բնատնտեսական ներուժի արդյունավետ օգտագործումը, մրցունակ ագրոպարենային համակարգի կայացումը և համընթաց զարգացումը,
- ✓ սննդամթերքի ինքնաբավության անհրաժեշտ մակարդակի ապահովումը,
- ✓ սննդամթերքի անվտանգության և որակի ապահովման համակարգի արդիականացումը,
- ✓ սննդամթերքի տնտեսական և ֆիզիկական մատչելիության ապահովմանն ուղղված միջոցառումների իրականացման արդյունավետության մակարդակի բարձրացումը,
- ✓ բնակչությանը լիարժեք սննդով ապահովելը,
- ✓ տարածքային համաչափ զարգացման միջոցով պարենային ռեսուրսների արդյունավետության բարձրացումը,
- ✓ արտակարգ իրավիճակներում և ռազմական դրության պայմաններում պարենային ճգնաժամերի կանխարգելումն ու կանխումը,
- ✓ պարենային անվտանգության ապահովման տեսանկյունից բնական ռեսուրսների հավասարակշռված օգտագործումը և շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցությունների կանխարգելումը,
- ✓ բնակչության սոցիալական ապահովվածության և սոցիալապես խոցելի խմբերի հուսալի պաշտպանվածության ապահովումը,
- ✓ հայեցակարգի դրույթներից բխող ծրագրերի համալիր իրագործման ապահովումը:

2.2. Պարենային անվտանգության ապահովման ուղղություններն են՝

- ✓ ագրոպարենային համակարգի զարգացումը,
- ✓ սննդամթերքի ինքնաբավության (անկախության) ապահովումը,
- ✓ սննդամթերքի անվտանգության և որակի ապահովումը,
- ✓ սննդամթերքի տնտեսական և ֆիզիկական մատչելիության ապահովումը,
- ✓ բնակչությանը լիարժեք սննդով ապահովելը,
- ✓ տարածքային համաչափ զարգացման միջոցով պարենային ռեսուրսների արդյունավետության կառավարումը,
- ✓ արտակարգ իրավիճակներում և ռազմական դրության պայմաններում պարենային անվտանգության ապահովումը,
- ✓ պարենային անվտանգության ապահովման տեսանկյունից բնական պաշարների հավասարակշռված օգտագործումը և շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցությունների կանխարգելումը:

2023թ –ի մարտի 9-ին ՀՀ Էկոնոմիկայի նախարարությունում տեղի է ունեցել «Պարենային անվտանգության համակարգի զարգացման ռազմավարության և 2022-2026 թվականների գործողությունների ծրագրի մշակման աշխատանքներ» թեմայով աշխատաժողով:

Աշխատաժողովը համակարգել է ՀՀ Էկոնոմիկայի նախարարի տեղակալ Արման Խոջոյանը: Միջոցառմանը մասնակցել են ՀՀ շահագրգիռ գերատեսչությունների փոխնախարարներ և այլ բարձրաստիճան պաշտոնյաներ, Պարենի համաշխարհային ծրագրի հայաստանյան գրասենյակի փոխտնօրեն Նաննա Սկաուն, Հայաստանի ազգային ագրարային համալսարանի ռեկտոր Վարդան Ուռուտյանը, ՀՀ ԳԱԱ Էկոլոգանոսֆերային կենտրոնի մի շարք պաշտոնյաներ և ոլորտին առնչվող այլ ներկայացուցիչներ:

Միջոցառմանն առցանց եղանակով մասնակցել է նաև Պարենի համաշխարհային ծրագրի գլխամասային գրասենյակի պարենային անվտանգության փորձագետ Դաուդ Խանը:

Խոջոյանն ընդգծել է պարենային անվտանգության կարևորությունը և նշել. «Այսօր առավել քան կարևորվում է պարենային անվտանգությունը՝ պայմանավորված հատկապես ստեղծված աշխարհաքաղաքական իրավիճակներով: Այս համատեքստում շատ կարևոր է ունենալ ընգրկուն գործողությունների պլան, որը հնարավորություն կտա արագ արձագանքել փոփոխվող միջավայրին, կլիմայի փոփոխություններին, աշխարհաքաղաքական և տնտեսական ցնցումներին՝ ստեղծված իրավիճակներում համարժեք գործողություններ ձեռնարկելու համար: Պարենային անվտանգությունը պետք է դիտարկել, որպես տնտեսության զարգացման հիմք»:

Նա կարևորել է ռազմավարության մշակման գործընթացում տարբեր գերատեսչությունների և շահագրգիռ կազմակերպությունների ներգրավումը և նշել, որ հարկավոր է համակարգել աշխատանքները, տարանջատել գերատեսչությունների դերը, անհրաժեշտ տեղեկատվություն փոխանցել միմյանց և սինխրոնիզացնել տարբեր գերատեսչությունների գործողությունները:

Պարենի համաշխարհային ծրագրի հայաստանյան գրասենյակի փոխտնօրեն Նաննա Սկաուն մեկ անգամ ևս վերահաստատել է Պարենի համաշխարհային ծրագրի հայաստանյան գրասենյակի հանձնառությունը և պատրաստակամությունը օգնելու ռազմավարության մշակման գործում:

Դաուն Խանը տեղեկացրել է, որ 2,5 շաբաթ Հայաստանում եղած ժամանակահատվածում, ՀՀ Էկոնոմիկայի նախարարության թիմի հետ հանդիպումներ են ունեցել որոշ գերատեսչությունների ղեկավարների հետ և նշել, որ պատրաստ է իր փորձն ու գիտելիքները ներդնել փաստաթղթի մշակման աշխատանքներն իրականացնելու գործընթացում:

Պարենային անվտանգության շրջանակում դիտարկվել է պարենամթերքի արտադրության զարգացումից բացի, մասնավորապես բարձր տեխնոլոգիաների դերը, շոկային իրավիճակներին արագ արձագանքման համակարգերի անհրաժեշտությունը, համայնքային ենթակառուցվածքների զարգացման և գիտական տվյալների բազայի կարևորությունը, նաև մարդկային ռեսուրսների զարգացման, քաղաքացիներին իրազեկման և կրթական այլ միջոցառումները:

Ծավալված քննարկման ընթացքում կարծիքներ և տեսակետներ են փոխանակվել ռազմավարության փաստաթղթի և գործողությունների ծրագրի մշակման աշխատանքների վերաբերյալ:

Հանդիպման ավարտին մասնակիցները հաստատել են միասնական աշխատելու իրենց պատրաստակամությունը: Պայմանավորվածություն է ձեռք բերվել ստեղծել աշխատանքային խումբ՝ պարենային անվտանգության ռազմավարության մշակման նպատակով, սահմանվել են հստակ ժամկետներ աշխատանքների իրականացման համար:

Այս առումով, ՀՀ Էկոնոմիկայի նախարարության ագրովերամշակման վարչության պետ Գևորգ Ղազարյանը խոստովանել է, որ պարենային անվտանգության հարցը սրվեց համավարակի, 44-օրյա պատերազմի և Ուկրաինայում տիրող իրավիճակի ֆոնին, երբ ՌԴ-ն արգելեց մի շարք ապրանքների արտահանումը:

Այդ ժամանակ էլ պարենային անվտանգության համակարգի կատարելագործման հարց առաջացավ և Էկոնոմիկայի նախարարությունը սկսեց աշխատել պարենային անվտանգության ռազմավարության մշակման և 2023-2026 թվականների գործողությունների ծրագրի մշակման ուղղությամբ:

Ծրագիրը ներառում է շուրջ 54 միջոցառում, որոնց նպատակն է բարելավել պարենային անվտանգության չորս առանցքային բաղադրիչով ապահովվածությունը (պարենի առկայություն, մատչելիություն, օգտագործում, ինչպես նաև պարենային ապահովվածության համակարգի կայունություն):

2023թ -ի հունիսի վերջին Կառավարությունը հաստատեց Պարենային անվտանգության համակարգի զարգացման ռազմավարությունը և 2023 - 2026 թվականների գործողությունների ծրագիրը:

Ռազմավարության հիմնական նպատակներից են՝ պարենային անվտանգության, այդ թվում՝ կենսապես կարևոր պարենային ապրանքների ինքնաբավության մակարդակի բարձրացումը, նյութական պահուստի պաշարների համալրումը և ընդլայնումը, ինչպես նաև բնակչության բոլոր խավերի համար առնվազն ֆիզիոլոգիական նվազագույն նորմերին համապատասխանող սննդի ձեռքբերման տնտեսական հնարավորությունների և օգտագործվող սննդամթերքի անվտանգության ապահովումը:

Ռազմավարության իրականացման արդյունքում ակնկալվում է ապահովել, մասնավորապես, բնակչության բոլոր խմբերի համար նվազագույն պարենային զամբյուղի հասանելիություն: Կառավարությունն ընդունել է որոշում, որի արդյունքում գյուղատնտեսությունում տնտեսվարողները հնարավորություն կունենան իրականացված աշնանացան ցորենի ցանքի դիմաց ստանալ ծրագրով նախատեսված փոխհատուցում:

2023 թ. պետբյուջեով «ՀՀ-ում աշնանացան ցորենի արտադրության խթանման նպատակով փոխհատուցման տրամադրում» ծրագրի շրջանակում նախատեսված էր՝ 2,825,000 հազ դրամ 32500 հա ցանքի համար, որից 11000 հեկտարը՝ հավատարմագրված սերմով և 21500 հեկտարը՝ չհավաստագրված սերմերով ցանքի իրականացման համար: Սակայն, համաձայն ՀՀ մարզպետարաններից ստացված

տեղեկատվության, ծրագրի շրջանակում կատարվել է 55198 հա աշնանացան ցորենի ցանք, ընդ որում՝ 14310 հա ցանքն իրականացվել է հավաստագրված սերմերով, իսկ 40888 հա ցանքը՝ չհավաստագրված սերմերով:

Արդյունքում, առաջացած կարիքը բավարարելու համար անհրաժեշտ է տրամադրել ևս 1,754,335 հազ դրամ:

Ծրագիրն իրականացվել է 2022-2023 թթ. և դեռ շարունակվում է իրականացվել ՀՀ բոլոր մարզերում՝ բացառությամբ ՀՀ Արարատի և Արմավիրի մարզերի:

Յուրաքանչյուր երկրի պարենային անվտանգությունը համարվում է ապահովված, եթե առկա է տնտեսության այնպիսի մակարդակ, որն երաշխավորում է բնակչության համար առողջապահական նորմերին համապատասխանող սննդամթերքի ֆիզիկական ու տնտեսական մատչելիությունը:

Սննդամթերքի ֆիզիկական մատչելիությունը բնակչության գնողունակ պահանջարկը բավարարող ծավալներով սննդամթերքի առաջարկի ապահովումն է:

Սննդամթերքի տնտեսական մատչելիությունը բնակչության գնողունակ պահանջարկի մակարդակ է, որն ապահովում է բնակչության կողմից սննդամթերքի ձեռքբերման հնարավորություն ֆիզիոլոգիական նորմերին համապատասխան:

3. Հայաստանում արտադրվող, բնակչության համար առաջնային անհրաժեշտության մի քանի պարենամթերքների արտադրության վիճակի հետ կապված ուսումնասիրություններ

Հայաստանի Հանրապետությունում պարենային անվտանգության ապահովվածության ներկա վիճակի մասին պատկերացում կազմելու համար, անհրաժեշտ է ուսումնասիրել երկրում արտադրվող, բնակչության համար առաջնային անհրաժեշտության մի քանի պարենամթերքների (հացահատիկային և հատիկալնդեղենային մշակաբույսերի, որից՝ ցորեն, կարտոֆիլ, ինչպես նաև՝ բանջարանոցային մշակաբույսեր, բոստանային մշակաբույսեր, և այլն) ցանքատարածությունների, բերքատվության և համախառն բերքի մասին, որի համար անհրաժեշտ է վերծանել Արմատատի վերջին մի քանի տարվա վիճակագրական արդյունքները:

Քանի դեռ 2022թ -ի և 2023թ -ի ցուցանիշները Արմատատը դեռ չի ամփոփել, հետազոտության և համեմատության համար, որպես վերջնական ցուցանիշներ, վերցնենք 2021թ -ի կամ 2020թ -երի արդյունքները:

Այնուհետև, անհրաժեշտ է վիճակագրական տեղեկատվությունը (տվյալների բազան) հավաքել, իրականացնել տվյալների համապատասխան համադրումներ (համեմատություններ), կատարել գնահատումներ՝ հայտնաբերելով ցուցանիշների հիմնական թերությունները (նվազում) և առավելությունները (ավելացում) նախորդ տարվա (կամ տարիների) նկատմամբ, կատարել համապատասխան վերլուծություններ, որոնց հիման վրա էլ, կներկայացվեն հիմնախնդրի (պարենային ապահովության) բարելավմանը ու կատարելագործմանը նպատակաուղղված արդյունավետ առաջարկություններ:

Իրականացվել են նաև մսամթերքի և այլ անասնապարենամթերքի արտադրության ուսումնասիրություններ, վերծանվել են նաև խոշոր եղջերավոր կենդանիների (այդ թվում՝ կովերի), խոզերի, ոչխարների և այծերի, թռչունների գլխաքանակի տվյալների բազան, մսամթերքի և անասնապահական այլ արտադրանքի (կաթ, ձու) արտադրության վերաբերյալ տեղեկատվություններ:

Հետազոտությունում հիմնական համեմատությունը կատարվել է 2022թ –ի արդյունքները համեմատելով 2018թ –ի արդյունքների հետ՝ որոշելու համար, թե որքանով է լավացել կամ վատացել, ՀՀ –ում պարենային անվտանգության ապահովության վիճակը այդ տարիների ընթացքում:

3.1 Գյուղատնտեսական հիմնական մշակաբույսերի և բազմամյա տնկարկների տարածությունները, բերքատվությունը և համախառն բերքը

աղյուսակ 3.1.1

	Տարածությունները (հազ. հա)				
	2018	2019	2020	2021	2022
Ցանքային տարածությունը, ընդամենը	242,3	227,9	222,7	227,2	212,4
որից՝					
հացահատիկային և հատիկաընդեղենային մշակաբույսեր	130,2	121,2	121,7	124,9	114,4
որից՝ ցորեն	66,7	59,9	59,4	59,1	56,8
կարտոֆիլ	22,1	20,5	20,5	20,1	19,3
բանջարանոցային մշակաբույսեր	21,7	20,6	21,3	19,5	19,1
բոստանային մշակաբույսեր	4,6	4,3	4,0	4,5	4,1
Պտուղ և հատապտուղ	43,0	43,4	43,8	44,7	45,0
Թաղող	16,1	16,5	16,7	16,5	16,2

Արմատատի վիճակագրական տվյալների համաձայն, վերջին տարիներին (2022թ –ին 2018թ –ի համեմատ) գյուղատնտեսական հիմնական մշակաբույսերի ցանքային տարածությունները **նվազել է՝** 29,9 հազ. հա, որից՝ հացահատիկային և հատիկաընդեղենային մշակաբույսերինը՝ 15,8 հազ. հա, որից՝ ցորենը՝ 9,9 հազ. հա, կարտոֆիլը՝ 2,8 հազ. հա, բանջարանոցային մշակաբույսերինը՝ 2,6 հազ. հա, բոստանային մշակաբույսերինը՝ 0,5 հազ. հա: Սա կարելի է գնահատել, որպես գյուղատնտեսության ոլորտի կառավարման վատ արդյունք:

Վերջին տարիներին գյուղատնտեսական հիմնական մշակաբույսերի ցանքային տարածությունների նվազման հիմնական պատճառը հանդիսանում է պետության կողմից գյուղատնտեսության հանդեպ ցուցաբերված անբավարար ուշադրությունը:

2022թ –ին 2018թ –ի համեմատ, որոշ չափով **ավելացել է՝** պտուղի և հատապտուղի՝ 2,0 հազ. հա և խաղողի՝ 0,1 հազ. հա ցանքատարածությունները, որը շատ դրական է արձանագրվում:

	Բերքատվությունը (գ/հա)				
	2018	2019	2020	2021	2022
Ցանքային տարածությունը, Ընդամենը, որից՝	x	x	x	x	x
հացահատիկային և հատիկաընդեղենային մշակաբույսեր	26,1	16,9	20,5	12,9	21,8
որից՝ ցորեն	28,2	19,6	22,5	16,8	24,5
կարտոֆիլ	187,3	199,2	212,8	179,3	182,1
բանջարանոցային մշակաբույսեր	258,6	265,0	280,8	271,8	282,2
բոստանային մշակաբույսեր	276,3	300,6	317,1	291,6	302,0
Պտուղ և հատապտուղ	87,7	76,2	71,4	82,1	86,6
Խաղող	120,1	146,1	189,3	157,9	149,3

2022թ –ին 2018թ –ի համեմատ, որոշ գյուղատնտեսական հիմնական մշակաբույսերի բերքատվությունը **նվազել է՝** հացահատիկային և հատիկաընդեղենային մշակաբույսերինը՝ 4,3 գ/հա որից՝ ցորենը 3,7 գ/հա, կարտոֆիլը՝ 5,2 գ/հա, պտղուղը և հատապտուղը՝ 1,1 գ/հա, որը շատ բացասական է գնահատվում:

2022թ –ին 2018թ –ի համեմատ, որոշ չափով **ավելացել է՝** բանջարանոցային մշակաբույսերինը՝ 23,6 գ/հա, բոստանային մշակաբույսերինը՝ 25,7 գ/հ, խաղողինը՝ 29,2 գ/հա, որը շատ դրական է արձանագրվում:

Վերջին տարիներին (2022թ –ին 2018թ –ի համեմատ) գյուղատնտեսական հիմնական մշակաբույսերի բերքատվության անկումը հիմնականում պայմանավորված է ցածր բերքատու մշակաբույսերի ընտրությամբ, նոր գյուղտեխնիկայի բացակայությամբ (առկա գյուղտեխնիկական հիմնականում հնամաշ է), ցանքատարածությունների անբավարար ջրմամբ, գյուղատնտեսական հիվանդությունների և վնասատուների դեմ անբավարար պայքար կազմակերպելով, ցանվող մշակաբույսերի անբավարար պարարտացումով, և այլ գործոններով:

	Համախառն բերքը (հազ.տոննա)				
	2018	2019	2020	2021	2022
Ցանքային տարածությունը, ընդամենը	x	x	x	x	x
որից՝					
հացահատիկային և հատիկաընդեղենային մշակաբույսեր	337,7	198,7	246,1	153,2	241,9
որից՝ ցորեն	187,5	112,6	132,0	97,2	138,6
կարտոֆիլ	415,1	404,1	437,2	364,6	351,4
բանջարանոցային մշակաբույսեր	628,2	621,6	692,8	619,6	610,6
բոստանային մշակաբույսեր	126,8	128,0	126,6	131,8	124,6
Պտուղ և հատապտուղ	343,4	290,6	274,3	323,0	346,3
Խաղող	179,7	217,5	283,2	237,1	225,8

2022թ –ին 2018թ –ի համեմատ, գյուղատնտեսական հիմնական մշակաբույսերի համախառն բերքը **նվազել է**՝ հացահատիկային և հատիկաընդեղենային մշակաբույսերինը՝ 95,8 հազ. տ, որից՝ ցորենը՝ 48,9 հազ. տ, կարտոֆիլը՝ 63,7 հազ. տ, բանջարանոցային մշակաբույսերինը՝ 17,6 հազ. տ, բոստանային մշակաբույսերինը՝ 2,2 հազ. տ, որը շատ բացասական է գնահատվում:

2022թ –ին 2018թ –ի համեմատ, որոշ չափով **ավելացել է**՝ պտուղի և հատապտուղի՝ 2,9 հազ. տ, խաղողի 46,1 հազ. տ համախառն բերքը, որը շատ դրական է արձանագրվում (հատկապես՝ խաղաղի պարագայում):

Այժմ, այդ նույն ուսումնասիրությունները, համադրությունները և վերլուծությունները կատարենք ըստ մարզերի:

3.2 Հացահատիկային և հատիկաընդեղենային մշակաբույսերի ցանքատարածություններ, միջին բերքատվություն և համախառն բերքը, ըստ մարզերի

աղյուսակ 3.2.1

	Ցանքատարածությունները (հա)				
	2018	2019	2020	2021	2022
ՀՀ ընդամենը	130163	121179	121656	124929	114409
որից՝					
Արագածոտն	16413	16582	17560	19347	17025
Արարատ	3298	2645	2568	2593	2347
Արմավիր	4033	4129	4267	4185	3450
Գեղարքունիք	26190	22725	22989	22971	20422
Լոռի	11540	10487	10827	11554	12105
Կոտայք	11742	10836	9813	10025	9050
Շիրակ	35613	33564	33283	36060	31696
Սյունիք	15054	13332	14440	13815	14095
Վայոց ձոր	1908	1760	1652	1567	1011
Տավուշ	4372	5119	4257	2812	3208

2022թ –ին 2018թ –ի համեմատ, հացահատիկային և հատիկաընդեղենային մշակաբույսերի ընդամենը ցանքատարածությունները **նվազել է**՝ 15754 հա –ով, որից՝ Արարատի մարզում՝ 951,0 հա –ով, Արմավիրի մարզում՝ 583 հա –ով, Գեղարքունիքի մարզում՝ 5768 հա, Կոտայքի մարզում՝ 2692 հա, Շիրակի մարզում՝ 3917 հա, Սյունիքի մարզում՝ 959 հա, Վայոց ձորի մարզում՝ 897 հա, Տավուշի մարզում՝ 1164 հա, որը շատ բացասական է գնահատվում:

Հացահատիկային և հատիկաընդեղենային մշակաբույսերի ցանքատարածությունների նվազման կողքին, որոշ չափով **ավելացել է**՝ Արագածոտնի մարզում՝ 612 հա, Լոռու մարզում՝ 565 հա, հացահատիկային և հատիկաընդեղենային մշակաբույսերի ընդամենը ցանքատարածությունները, որը շատ դրական է արձանագրվում:

	Բերքատվությունը (g/հա)				
	2018	2019	2020	2021	2022
ՀՀ ընդամենը	26,1	16,9	20,5	12,9	21,8
որից՝					
Արագածոտն	23,7	14,6	23,3	6,8	19,6
Արարատ	37,5	36,4	37,3	34,7	37,3
Արմավիր	37,4	37,6	41,1	36,9	41,0
Գեղարքունիք	20,0	14,0	16,0	8,6	14,6
Լոռի	31,5	25,0	27,4	25,3	27,3
Կոտայք	23,8	13,6	18,7	11,3	18,7
Շիրակ	30,8	14,7	19,7	8,3	22,1
Սյունիք	20,9	17,3	15,6	16,1	23,8
Վայոց ձոր	23,1	13,2	11,1	11,0	13,5
Տավուշ	26,2	14,3	16,3	24,6	26,7

Հացահատիկային և հատիկարնդեղենային մշակաբույսերի ընդամենը բերքատվությունները *նվազել է*՝ 4,3 g/հա –ով, որից՝ Արագածոտնի մարզում՝ 4,1 g/հա, Արարատի մարզում՝ 0,2 g/հա –ով, Գեղարքունիքի մարզում՝ 5,4 g/հա, Լոռու մարզում՝ 4,2 g/հա, Կոտայքի մարզում՝ 5,1 g/հա, Շիրակի մարզում՝ 8,7 g/հա, Վայոց ձորի մարզում՝ 9,6 g/հա, որը բացասական է գնահատվում:

Հացահատիկային և հատիկարնդեղենային բերքատվությունների նվազման կողքին, որոշ չափով *ավելացել է* բերքատվությունը՝ Արմավիրի մարզում՝ 3,6 g/հա, Սյունիքի մարզում՝ 2,9 g/հա, Տավուշի մարզում՝ 0,5 g/հա որը շատ դրական է արձանագրվում:

	Համախառն բերքը (հազ.տոննա)				
	2018	2019	2020	2021	2022
ՀՀ ընդամենը	337,7	198,7	246,1	153,2	241,9
որից՝					
Արագածոտն	39,0	24,2	40,9	13,2	33,4
Արարատ	12,4	9,6	9,6	9,0	8,7
Արմավիր	15,1	16,0	18,0	16,2	14,2
Գեղարքունիք	52,0	31,8	36,7	18,6	29,8
Լոռի	36,3	26,2	29,5	29,0	32,7
Կոտայք	27,9	14,7	18,4	11,3	16,9
Շիրակ	108,6	44,1	63,2	25,7	62,9
Սյունիք	31,4	23,0	22,2	21,8	33,4
Վայոց ձոր	4,4	2,3	1,8	1,6	1,4
Տավուշ	10,6	6,8	5,8	6,8	8,5

Հացահատիկային և հատիկարնդեղենային մշակաբույսերի ընդամենը համախառն բերքը *նվազել է*՝ 95,8 հազ. տ –ով, որից՝ Արագածոտնի մարզում՝ 5,6 հազ. տ, Արարատի մարզում՝ 3,7 հազ. տ –ով, Արմավիրի մարզում՝ 0,9 հազ. տ –ով, Գեղարքունիքի մարզում՝ 22,2 հազ. տ, Լոռու մարզում՝ 3,6 հազ. տ, Կոտայքի մարզում՝ 11 հազ. տ, Շիրակի մարզում՝ 45,7 հազ. տ, Վայոց ձորի մարզում՝ 3 հազ. տ, Տավուշի մարզում՝ 2,1 հազ. տ, որը շատ բացասական է գնահատվում:

Հացահատիկային և հատիկաընդունային համախառն բերքի նվազման կողքին, որոշ չափով *ավելացել է*՝ համախառն բերքը՝ Սյունիքի մարզում՝ 2 հազ. տ, որը շատ դրական է արձանագրվում:

3. 3. Ցորենի ցանքատարածություններ, միջին բերքատվություն և համախառն բերք, ըստ մարզերի

աղյուսակ 3.3.1

	Ցանքատարածությունները (հա)				
	2018	2019	2020	2021	2022
ՀՀ ընդամենը	66680	59906	59393	59110	56757
որից՝					
Արագածոտն	4393	4578	5088	5489	4823
Արարատ	2301	1888	1778	1854	1680
Արմավիր	2883	3170	3261	3161	2721
Գեղարքունիք	12388	10456	10930	10792	9924
Լոռի	8900	8185	8103	8990	9634
Կոտայք	4807	4133	4026	3940	3822
Շիրակ	18652	15957	14930	15051	12893
Սյունիք	8667	7463	8123	7864	9080
Վայոց ձոր	667	523	412	372	205
Տավուշ	3022	3553	2742	1597	1975

Ցորենի ընդամենը ցանքատարածությունը *նվազել է*՝ 9923 հա –ով, որից՝ Արարատի մարզում՝ 621 հա –ով, Արմավիրի մարզում՝ 162 հա –ով, Գեղարքունիքի մարզում՝ 2464 հա, Կոտայքի մարզում՝ 985 հա, Շիրակի մարզում՝ 5759 հա, Վայոց ձորի մարզում՝ 462 հա, Տավուշի մարզում՝ 1047 հա, որը շատ բացասական է գնահատվում: Ցորենի ցանքատարածությունների նվազման կողքին, որոշ չափով *ավելացել է*՝ ցանքատարածությունը՝ Արագածոտնի մարզում՝ 430 հա, Լոռու մարզում՝ 734 հա, Սյունիքի մարզում՝ 413 հա, որը շատ դրական է արձանագրում:

աղյուսակ 3.3.2

	Բերքատվությունը (g/հա)				
	2018	2019	2020	2021	2022
ՀՀ ընդամենը	28,2	19,6	22,5	16,8	24,5
որից՝					
Արագածոտն	26,6	15,7	23,8	7,4	20,7
Արարատ	37,1	38,5	39,0	37,5	38,5
Արմավիր	39,3	38,7	42,1	37,4	41,7
Գեղարքունիք	21,5	15,6	17,9	10,5	16,3
Լոռի	33,9	27,0	28,6	27,3	28,6
Կոտայք	26,0	15,2	18,8	12,1	20,7
Շիրակ	32,4	16,4	21,5	10,6	23,9
Սյունիք	21,6	17,8	17,5	19,6	25,8
Վայոց ձոր	24,2	16,9	11,9	10,0	15,0
Տավուշ	21,9	12,8	12,1	21,7	26,1

Ցորենի ընդամենը բերքատվությունները *նվազել է*՝ 3,7 g/հա –ով, որից՝ Արագածոտնի մարզում՝ 5,9 g/հա, Գեղարքունիքի մարզում՝ 5,2 g/հա, Լոռու մարզում՝ 5,3 g/հա, Կոտայքի մարզում՝ 5,3 g/հա, Շիրակի մարզում՝ 8,5 g/հա, Վայոց ձորի մարզում՝ 9,2 g/հա, որը շատ բացասական է գնահատվում:

Ցորենի բերքատվությունների նվազման կողքին, որոշ չափով *ավելացել է*՝ բերքատվությունը՝ Արարատի մարզում՝ 1,4 գ/հա –ով, Արմավիրի մարզում՝ 2,4 գ/հա, Սյունիքի մարզում՝ 4,2 գ/հա, Տավուշի մարզում՝ 4,2 գ/հա որը շատ դրական է արձանագրվում:

աղյուսակ 3.3.3

	Համախառն բերքը (հազ.տոննա)				
	2018	2019	2020	2021	2022
ՀՀ ընդամենը	187,5	112,6	132,0	97,2	138,6
որից՝					
Արագածոտն	11,7	7,2	12,1	4,1	10,0
Արարատ	8,5	7,3	7,0	7,0	6,5
Արմավիր	11,3	12,2	13,7	11,8	11,4
Գեղարքունիք	26,5	16,3	19,5	10,9	16,2
Լոռի	30,2	22,1	23,0	24,3	27,3
Կոտայք	12,5	6,3	7,6	4,7	7,9
Շիրակ	60,2	22,8	31,9	15,3	30,6
Սյունիք	18,7	13,3	14,1	15,4	23,3
Վայոց ձոր	1,6	0,9	0,5	0,3	0,3
Տավուշ	6,3	4,2	2,6	3,4	5,1

Ցորենի ընդամենը համախառն բերքը *նվազել է*՝ 48,9 հազ. տ –ով, որից՝ Արագածոտնի մարզում՝ 1,7 հազ. տ, Արարատի մարզում՝ 2,0 հազ. տ –ով, Գեղարքունիքի մարզում՝ 10,3 հազ. տ, Լոռու մարզում՝ 2,9 հազ. տ, Կոտայքի մարզում՝ 4,6 հազ. տ, Շիրակի մարզում՝ 29,6 հազ. տ, Վայոց ձորի մարզում՝ 1,3 հազ. տ, Տավուշի մարզում՝ 1,2 հազ. տ, որը շատ բացասական է գնահատվում:

Ցորենի համախառն բերքի նվազման կողքին, որոշ չափով *ավելացել է*՝ բերքատվությունը՝ Արմավիրի մարզում՝ 0,1 հազ. տ –ով, Սյունիքի մարզում՝ 4,6 հազ. տ, որը շատ դրական է արձանագրվում:

3.4. Կարտոֆիլի ցանքատարածություններ, միջին բերքատվություն և համախառն բերք, ըստ մարզերի

աղյուսակ 3.4.1

	Ցանքատարածությունները (հա)				
	2018	2019	2020	2021	2022
ՀՀ ընդամենը	22062	20477	20531	20125	19263
որից՝					
Արագածոտն	1060	1055	1062	1019	877
Արարատ	619	534	508	552	629
Արմավիր	1417	1252	1182	1285	1309
Գեղարքունիք	8777	8096	7995	7720	7004
Լոռի	3596	3432	3510	3543	3475
Կոտայք	755	645	637	646	670
Շիրակ	3221	3236	3536	3404	3566
Սյունիք	1316	1200	1128	1004	876
Վայոց ձոր	160	124	125	106	101
Տավուշ	1051	838	783	766	693

Կարտոֆիլի ընդամենը ցանքատարածությունը *նվազել է*՝ 2799 հա –ով, որից՝ Արագածոտնի մարզում՝ 183 հա, Արմավիրի մարզում՝ 108 հա –ով, Գեղարքունիքի

մարզում՝ 1773 հա, Լոռու մարզում՝ 121 հա, Կոտայքի մարզում՝ 85 հա, Սյունիքի մարզում՝ 440 հա, Վայոց ձորի մարզում՝ 59 հա, Տավուշի մարզում՝ 358 հա, որը շատ բացասական է գնահատվում:

Կարտոֆիլի ցանքատարածությունների նվազման կողքին, որոշ չափով *ավելացել է*՝ ցանքատարածությունը՝ Արարատի մարզում՝ 10 հա –ով, Շիրակի մարզում՝ 345 հա, որը շատ դրական է արձանագրվում:

աղյուսակ 3.4.2

	Բերքատվությունը (g/հա)				
	2018	2019	2020	2021	2022
ՀՀ ընդամենը	187,3	199,2	212,8	179,3	181,2
որից՝					
Արագածոտն	181,4	214,9	268,2	203,7	217,1
Արարատ	262,4	272,5	285,1	281,8	277,0
Արմավիր	298,6	320,0	389,5	341,3	322,8
Գեղարքունիք	192,4	210,2	219,2	176,4	181,4
Լոռի	145,8	158,9	168,9	151,3	147,4
Կոտայք	175,3	186,2	190,7	189,7	179,3
Շիրակ	216,2	210,7	216,5	170,6	170,6
Սյունիք	144,3	144,6	149,8	122,0	146,3
Վայոց ձոր	115,8	131,3	138,4	116,6	124,9
Տավուշ	94,2	59,9	71,0	81,8	92,4

Կարտոֆիլի ընդամենը բերքատվությունները *նվազել է* 6,1 g/հա –ով, որից՝ Գեղարքունիքի մարզում՝ 11 g/հա, Շիրակի մարզում՝ 45,6 g/հա, Տավուշի մարզում՝ 1,8 g/հա, որը շատ բացասական է գնահատվում:

Կարտոֆիլի բերքատվությունների նվազման կողքին, որոշ չափով *ավելացել է*՝ բերքատվությունը՝ Արագածոտնի մարզում՝ 35,7 g/հա, Արարատի մարզում՝ 14,6 g/հա, Արմավիրի մարզում՝ 24,2 g/հա, Լոռու մարզում՝ 1,6 g/հա, Կոտայքի մարզում՝ 4 g/հա, Սյունիքի մարզում՝ 2,0 g/հա, Վայոց ձորի մարզում՝ 9,1 g/հա, որը շատ դրական է արձանագրվում:

աղյուսակ 3.4.3

	Համախառն բերքը (հազ.տոննա)				
	2018	2019	2020	2021	2022
ՀՀ ընդամենը	415,1	404,1	437,2	364,6	351,4
որից՝					
Արագածոտն	19,2	22,7	28,5	20,8	19,0
Արարատ	16,4	14,6	14,5	15,7	18,0
Արմավիր	44,2	42,9	46,6	51,0	42,3
Գեղարքունիք	168,9	170,2	175,0	132,8	127,1
Լոռի	52,4	49,4	59,3	53,6	51,2
Կոտայք	13,2	12,0	12,1	12,3	12,0
Շիրակ	69,6	67,9	76,6	58,1	60,8
Սյունիք	19,0	17,4	16,9	12,3	12,8
Վայոց ձոր	1,9	1,6	1,7	1,2	1,3
Տավուշ	9,9	5,0	5,6	6,2	6,4

Կարտոֆիլի ընդամենը համախառն բերքը *նվազել է* 63,7 հազ. տ –ով, որից՝ Արագածոտնի մարզում՝ 0,2 հազ. տ, Արմավիրի մարզում՝ 1,9 հազ. տ –ով, Գեղարքունիքի մարզում՝ 41,8 հազ. տ, Լոռու մարզում՝ 1,2 հազ. տ, Կոտայքի մարզում՝ 1,2 հազ. տ, Շիրակի մարզում՝ 8,8 հազ. տ, Սյունիքի մարզում՝ 6,2 հազ. տ, Վայոց ձորի

մարզում՝ 0.6 հազ. տ, Տավուշի մարզում՝ 3,5 հազ. տ, որը շատ բացասական է գնահատվում:

Կարտոֆիլի համախառն բերքների նվազման կողքին, որոշ չափով *ավելացել է* բերքատվությունը՝ Արարատի մարզում՝ 1,6 հազ. տ –ով, որը շատ դրական է արձանագրվում:

3.5. Բանջարանոցային մշակաբույսերի ցանքատարածություններ, միջին բերքատվություն և համախառն բերք, ըստ մարզերի

աղյուսակ 3.5.1

	Ցանքատարածությունները (հա)				
	2018	2019	2020	2021	2022
ՀՀ ընդամենը	21658	20616	21272	19506	19110
որից՝					
Արագածոտն	444	416	557	461	335
Արարատ	4889	4928	5110	4476	4261
Արմավիր	8886	8155	8661	8108	8236
Գեղարքունիք	1469	1439	1406	1168	1242
Լոռի	1338	1303	1296	1284	1144
Կոտայք	990	938	936	879	817
Շիրակ	1450	1383	1440	1336	1301
Սյունիք	752	714	604	526	505
Վայոց ձոր	411	349	319	271	273
Տավուշ	708	711	663	694	718

Բանջարանոցային մշակաբույսերի ընդամենը ցանքատարածությունը *նվազել է՝* 2548 հա, որից՝ Արագածոտնի մարզում՝ 109 հա, Արարատի մարզում՝ 628 հա, Արմավիրի մարզում՝ 650 հա, Գեղարքունիքի մարզում՝ 227 հա, Լոռու մարզում՝ 194 հա, Կոտայքի մարզում՝ 173 հա, Շիրակի մարզում՝ 149 հա Սյունիքի մարզում՝ 247հա, Վայոց ձորի մարզում՝ 138 հա, որը շատ բացասական է գնահատվում:

Բանջարանոցային մշակաբույսերի ցանքատարածությունների նվազման կողքին, որոշ չափով *ավելացել է՝* միայն Տավուշի մարզում՝ 10 հա ցանքատարածությունը, որը շատ դրական է արձանագրվում:

աղյուսակ 3.5.2

	Բերքատվությունը (g/հա)				
	2018	2019	2020	2021	2022
ՀՀ ընդամենը	258,6	265,0	280,8	271,8	282,2
որից՝					
Արագածոտն	199,2	145,2	139,0	182,7	146,6
Արարատ	371,7	399,1	400,2	393,2	394,0
Արմավիր	285,8	304,7	336,6	339,6	342,7
Գեղարքունիք	239,6	217,9	201,1	155,4	201,2
Լոռի	135,2	114,9	122,9	95,3	156,4
Կոտայք	145,0	136,8	142,2	142,0	136,4
Շիրակ	216,8	169,8	174,0	132,7	153,6
Սյունիք	127,8	100,8	98,3	98,2	108,0
Վայոց ձոր	107,0	127,8	149,9	132,4	149,7
Տավուշ	88,3	74,6	64,6	79,6	76,2

Բանջարանոցային մշակաբույսերի բերքատվությունները *նվազել է՝* Արագածոտնի մարզում՝ 52,6 g/հա, Գեղարքունիքի մարզում՝ 38,4 g/հա, Կոտայքի մարզում՝ 8,6 g/հա, Շիրակի մարզում՝ 63,2 g/հա, Սյունիքի մարզում՝ 19,8 g/հա, Տավուշի մարզում՝ 12,1 g/հա, որը շատ բացասական է գնահատվում:

Բանջարանոցային մշակաբույսերի ընդամենը բերքատվությունները *ավելացել է*՝ 23,6 գ/հա, Արարատի մարզում՝ 22,3 գ/հա –ով, Արմավիրի մարզում՝ 56,9 գ/հա, Լոռու մարզում՝ 21,2 գ/հա, Վայոց ձորի մարզում՝ 42,7 գ/հա, որը շատ դրական է արձանագրվում:

աղյուսակ 3.5.3

	Համախառն բերքը (հազ.տոննա)				
	2018	2019	2020	2021	2022
ՀՀ ընդամենը	628,2	621,6	692,8	619,6	610,6
որից՝					
Արագածոտն	10,6	7,2	10,9	8,7	4,9
Արարատ	200,9	217,2	227,1	204,8	206,6
Արմավիր	291,4	286,7	345,7	319,8	303,8
Գեղարքունիք	35,2	31,4	28,3	18,1	25,0
Լոռի	18,1	15,0	15,9	12,2	17,9
Կոտայք	18,7	21,3	23,0	22,1	15,4
Շիրակ	31,5	23,4	25,1	17,6	19,9
Սյունիք	9,6	7,2	5,9	5,2	5,4
Վայոց ձոր	4,4	4,5	4,8	3,6	4,1
Տավուշ	7,2	7,1	5,5	5,6	5,9

Բանջարանոցային մշակաբույսերի ընդամենը համախառն բերքը *նվազել է* 17,6 հազ. տ, որից՝ Արագածոտնի մարզում՝ 5,7 հազ. տ, Գեղարքունիքի մարզում՝ 10,2 հազ. տ, Լոռու մարզում՝ 0,2 հազ. տ, Կոտայքի մարզում՝ 3,3 հազ. տ, Շիրակի մարզում՝ 11,6 հազ. տ, Սյունիքի մարզում՝ 4,2 հազ. տ, Վայոց ձորի մարզում՝ 0.3 հազ. տ, Տավուշի մարզում՝ 1,3 հազ. տ, որը շատ բացասական է գնահատվում:

Բանջարանոցային մշակաբույսերի համախառն բերքի նվազման կողքին, որոշ չափով *ավելացել է* բերքատվությունը՝ Արարատի մարզում՝ 5,7 հազ. տ, Արմավիրի մարզում՝ 12,4 հազ. տ, որը շատ դրական է արձանագրվում:

3.6. Բոստանային մշակաբույսերի ցանքատարածություններ, միջին բերքատվություն և համախառն բերք, ըստ մարզերի

աղյուսակ 3.6.1

	Ցանքատարածությունները (հա)				
	2018	2019	2020	2021	2022
ՀՀ ընդամենը	4602	4257	3995	4525	4124
որից՝					
Արագածոտն	83	97	83	86	84
Արարատ	1326	1077	981	986	993
Արմավիր	3051	2954	2804	3307	2907
Գեղարքունիք	-	-	-	-	-
Լոռի	7	9	7	8	6
Կոտայք	-	-	-	-	-
Շիրակ	1	1	1	1	0
Սյունիք	0	0	9	12	10
Վայոց ձոր	31	14	13	17	27
Տավուշ	43	47	39	49	43

Բոստանային մշակաբույսերի ընդամենը ցանքատարածությունը *նվազել է*՝ 478 հա, որից՝ Արարատի մարզում՝ 333 հա, Արմավիրի մարզում՝ 144 հա, Գեղարքունիքի մարզում՝ 0 հա, Լոռու մարզում՝ 1 հա, Կոտայքի մարզում՝ 0 հա, Շիրակի մարզում՝ 0

հա, Վայոց ձորի մարզում՝ 4 հա, Տավուշի մարզում՝ 0 հա, որը շատ բացասական է գնահատվում:

Բոստանային մշակաբույսերի ցանքատարածությունների նվազման կողքին, որոշ չափով **ավելացել է**՝ Արագածոտնի մարզում՝ 1,0 հա, Սյունիքի մարզում՝ 10 հա ցանքատարածությունը, որը շատ դրական է արձանագրվում:

աղյուսակ 3.6.2

	Բերքատվությունը (g/հա)				
	2018	2019	2020	2021	2022
ՀՀ ընդամենը	276,3	300,6	317,1	291,6	302,0
որից՝					
Արագածոտն	169,7	392,6	141,8	156,0	141,8
Արարատ	359,0	344,8	382,7	370,3	352,2
Արմավիր	250,8	291,6	309,5	278,7	297,6
Գեղարքունիք	-	-	-	-	-
Լոռի	140,9	61,0	109,9	88,6	130,7
Կոտայք	-	-	-	-	-
Շիրակ	400,0	150,0	150,0	20,0	-
Սյունիք	-	-	146,2	181,5	236,3
Վայոց ձոր	101,6	124,0	132,7	205,0	220,7
Տավուշ	181,8	90,9	142,9	149,8	125,9

Բոստանային մշակաբույսերի ընդամենը բերքատվությունները **նվազել է** 25,7 g/հա, որից՝ Արագածոտնի մարզում՝ 27,9 g/հա, Արարատի մարզում՝ 6,8 g/հա, Գեղարքունիքի մարզում՝ 0 g/հա, Լոռու մարզում՝ 10,2 g/հա, Կոտայքի մարզում՝ 0 g/հա, Շիրակի մարզում՝ 0 g/հա, Տավուշի մարզում՝ 55,9 g/հա, որը շատ բացասական է գնահատվում:

Բոստանային մշակաբույսերի բերքատվությունների նվազման կողքին, որոշ չափով **ավելացել է** բերքատվությունը՝ Արմավիրի մարզում՝ 46,8 g/հա, Սյունիքի մարզում՝ 236,3 g/հա, Վայոց ձորի մարզում՝ 119,1 g/հա, որը շատ դրական է արձանագրում:

աղյուսակ 3.6.3

	Համախառն բերքը (հազ.տոննա)				
	2018	2019	2020	2021	2022
ՀՀ ընդամենը	126,8	128,0	126,6	131,8	124,6
որից՝					
Արագածոտն	1,4	3,8	1,2	1,3	1,2
Արարատ	47,6	37,2	37,5	36,5	35,0
Արմավիր	76,2	86,1	86,7	92,0	86,5
Գեղարքունիք	-	-	-	-	-
Լոռի	0,1	0,1	0,1	0,1	0,1
Կոտայք	-	-	-	-	0
Շիրակ	0,1	0	0	0	0
Սյունիք	0	0	0,1	0,2	0,2
Վայոց ձոր	0,3	0,2	0,2	0,3	0,6
Տավուշ	0,8	0,4	0,6	0,7	0,5

Բոստանային մշակաբույսերի ընդամենը համախառն բերքը **նվազել է** 2,2 հազ. տ –ով, որից՝ Արագածոտնի մարզում՝ 0,2 հազ. տ, Արարատի մարզում՝ 12,6 հազ. տ –ով, Գեղարքունիքի մարզում՝ 0 հազ. տ, Լոռու մարզում՝ 0 հազ. տ, Կոտայքի մարզում՝ 0

հազ. տ, Շիրակի մարզում՝ 0 հազ. տ, Տավուշի մարզում՝ 0,3 հազ. տ, որը շատ բացասական է գնահատվում:

Բոստանային մշակաբույսերի համախառն բերքի նվազման կողքին, որոշ չափով **ավելացել է** բերքատվությունը՝ Արմավիրի մարզում՝ 10,3 հազ. տ –ով, Սյունիքի մարզում՝ 0,2 հազ. տ, Վայոց ձորի մարզում՝ 0.3 հազ. տ, որը շատ դրական է արձանագրվում:

3.7. Պտղի և հատապտղի տարածություններ, միջին բերքատվություն և համախառն բերք, ըստ մարզերի

աղյուսակ 3.7.1

	Ցանքատարածությունները (հա)				
	2018	2019	2020	2021	2022
ՀՀ ընդամենը	43035	43411	43751	44708	45034
որից՝					
Արագածոտն	7446	6574	6232	6252	6226
Արարատ	8211	8630	8661	8753	8819
Արմավիր	9418	9928	10422	11169	11452
Գեղարքունիք	1458	1519	1527	1525	1545
Լոռի	2310	2315	2317	2319	2355
Կոտայք	4351	4651	4651	4684	4549
Շիրակ	627	561	637	592	615
Սյունիք	2616	2621	2627	2636	2638
Վայոց ձոր	2538	2510	2517	2513	2519
Տավուշ	2732	2774	2832	2937	2988

Պտղի և հատապտղի ցանքատարածությունները **նվազել են**՝ Արագածոտնի մարզում՝ 1220 հա, Շիրակի մարզում՝ 12 հա, Վայոց ձորի մարզում՝ 19 հա, որը շատ բացասական է գնահատվում:

Պտղի և հատապտղի ընդամենը ցանքատարածությունները **ավելացել են**՝ 1999 հա, Արարատի մարզում՝ 608 հա, Արմավիրի մարզում՝ 2034 հա, Գեղարքունիքի մարզում՝ 87 հա, Լոռու մարզում՝ 45 հա, Կոտայքի մարզում՝ 198 հա, Սյունիքի մարզում՝ 22 հա Տավուշի մարզում՝ 256 հա, որը շատ դրական է արձանագրվում:

աղյուսակ 3.7.2

	Բերքատվությունը (g/հա)				
	2018	2019	2020	2021	2022
ՀՀ ընդամենը	87,7	76,2	71,4	82,1	86,6
որից՝					
Արագածոտն	119,4	89,7	84,3	106,2	120,7
Արարատ	126,3	104,3	98,7	109,8	112,8
Արմավիր	117,3	117,4	103,4	124,5	130,7
Գեղարքունիք	87,1	93,8	90,2	90,5	48,3
Լոռի	30,5	25,8	29,3	13,6	8,6
Կոտայք	59,1	37,2	38,6	39,6	44,1
Շիրակ	82,0	50,2	64,7	36,0	39,0
Սյունիք	23,0	46,3	34,4	45,4	54,4
Վայոց ձոր	21,5	18,3	16,9	34,4	28,3
Տավուշ	34,6	36,6	42,4	41,2	54,7

Պտղի և հատապտղի ընդամենը բերքատվությունները **նվազել է**՝ 1,1 g/հա, որից՝ Արարատի մարզում՝ 13,5 g/հա, Գեղարքունիքի մարզում՝ 38,8 g/հա, Լոռու մարզում՝

21,9 գ/հա, Կոտայքի մարզում՝ 15 գ/հա, Շիրակի մարզում՝ 43 գ/հա, որը շատ բացասական է գնահատվում:

Պտղի և հատապտղի բերքատվությունների նվազման կողքին, որոշ չափով **ավելացել է**՝ բերքատվությունը՝ Արագածոտնի մարզում՝ 1,3 գ/հա, Արմավիրի մարզում՝ 13,4 գ/հա, Սյունիքի մարզում՝ 31,5 գ/հա, Վայոց ձորի մարզում՝ 6,8 գ/հա, Տավուշի մարզում՝ 20,1 գ/հա որը շատ դրական է արձանագրվում:

աղյուսակ 3.7.3

	Համախառն բերքը (հազ.տոննա)				
	2018	2019	2020	2021	2022
ՀՀ ընդամենը	343,4	290,6	274,3	323,0	346,3
որից՝					
Արագածոտն	88,8	51,6	49,1	62,4	70,8
Արարատ	92,8	79,7	75,7	87,3	89,9
Արմավիր	91,9	92,6	82,6	102,6	115,1
Գեղարքունիք	11,9	13,5	13,0	12,9	7,3
Լոռի	6,4	5,4	6,2	2,9	1,8
Կոտայք	22,9	15,5	15,9	17,6	19,0
Շիրակ	5,1	2,8	4,0	3,0	3,2
Սյունիք	5,9	11,9	8,9	11,8	14,2
Վայոց ձոր	4,4	3,8	3,5	7,2	6,1
Տավուշ	9,2	9,7	11,2	11,1	14,9

Պտղի և հատապտղի համախառն բերքը **նվազել է**՝ Արագածոտնի մարզում՝ 18 հազ. տ, Արարատի մարզում՝ 2,9 հազ. տ –ով, Գեղարքունիքի մարզում՝ 4,6 հազ. տ, Լոռու մարզում՝ 4,6 հազ. տ, Կոտայքի մարզում՝ 3,9 հազ. տ, Շիրակի մարզում՝ 1,9 հազ. տ, որը շատ բացասական է գնահատվում:

Պտղի և հատապտղի ընդամենը համախառն բերքը **ավելացել է**՝ 2,9 հազ. տ, Արմավիրի մարզում՝ 23,2 հազ. տ –ով, Սյունիքի մարզում՝ 8,3 հազ. տ, Վայոց ձորի մարզում՝ 1,7 հազ. տ, Տավուշի մարզում՝ 5,7 հազ. տ, որը շատ դրական է արձանագրվում:

3. 8. Խաղողի տարածություններ, միջին բերքատվություն և համախառն բերք, ըստ մարզերի

աղյուսակ 3.8.1

	Ցանքատարածությունները (հա)				
	2018	2019	2020	2021	2022
ՀՀ ընդամենը	16099	16497	16681	16524	16160
որից՝					
Արագածոտն	1451	1433	1409	1509	1474
Արարատ	4647	4800	4849	4856	4816
Արմավիր	6924	7229	7401	7186	6942
Գեղարքունիք	-	-	-	-	-
Լոռի	67	67	67	67	37
Կոտայք	156	148	136	79	67
Շիրակ	-	-	-	-	-
Սյունիք	180	179	179	180	180
Վայոց ձոր	1214	1202	1202	1205	1205
Տավուշ	1364	1343	1342	1346	1343

Խաղողի ցանքատարածությունը **նվազել է**՝ Արմավիրի մարզում՝ 0 հա, Գեղարքունիքի մարզում՝ 0 հա, Լոռու մարզում՝ 30 հա, Կոտայքի մարզում՝ 89 հա, Շիրակի մարզում՝ 0 հա, Սյունիքի մարզում՝ 0 հա, Վայոց ձորի մարզում՝ 9 հա, Տավուշի մարզում՝ 21 հա, որը շատ բացասական է գնահատվում:

Խաղողի ընդամենը ցանքատարածությունը **ավելացել է**՝ 61 հա, որից՝ Արագածոտնի մարզում՝ 23 հա, Արարատի մարզում՝ 169 հա, որը շատ դրական է արձանագրում:

աղյուսակ 3.8.2

	Բերքատվությունը (g/հա)				
	2018	2019	2020	2021	2022
ՀՀ ընդամենը	120,1	146,1	189,3	157,9	149,3
որից՝					
Արագածոտն	51,3	100,6	135,6	110,0	63,7
Արարատ	157,0	203,5	272,3	216,6	198,6
Արմավիր	136,7	153,4	188,2	168,8	168,4
Գեղարքունիք	-	-	-	-	-
Լոռի	21,8	15,6	13,1	13,8	26,5
Կոտայք	22,6	10,0	34,9	24,4	23,2
Շիրակ	-	-	-	-	-
Սյունիք	26,9	31,5	30,5	29,5	30,4
Վայոց ձոր	53,8	38,9	76,6	39,7	53,2
Տավուշ	74,8	86,1	95,8	84,4	81,5

Խաղողի բերքատվությունները **նվազել է** Գեղարքունիքի մարզում՝ 0 g/հա, Շիրակի մարզում՝ 0 g/հա, Վայոց ձորի մարզում՝ 0,6 g/հա, Տավուշի մարզում՝ 6,7 g/հա, որը շատ բացասական է գնահատվում:

Խաղողի ընդամենը բերքատվությունները **ավելացել է** 29,2 g/հա, որից՝ Արագածոտնի մարզում՝ 12,4 g/հա, Արարատի մարզում՝ 41,6 g/հա, Արմավիրի մարզում՝ 31,7 g/հա, Լոռու մարզում՝ 4,7 g/հա, Կոտայքի մարզում՝ 0,6 g/հա, Սյունիքի մարզում՝ 3,5 g/հա, որը շատ դրական է արձանագրում է:

աղյուսակ 3.8.3

	Համախառն բերքը (հազ.տոննա)				
	2018	2019	2020	2021	2022
ՀՀ ընդամենը	179,7	217,3	283,2	237,1	225,8
որից՝					
Արագածոտն	7,5	13,2	16,8	15,2	8,7
Արարատ	70,3	92,2	123,7	99,1	89,8
Արմավիր	85,4	95,8	121,3	106,5	110,1
Գեղարքունիք	-	-	-	-	-
Լոռի	0,1	0,1	0,1	0,1	0,1
Կոտայք	0,2	0,1	0,3	0,2	0,2
Շիրակ	-	-	-	-	-
Սյունիք	0,5	0,6	0,5	0,5	0,5
Վայոց ձոր	5,5	3,9	7,7	4,0	5,4
Տավուշ	9,9	11,2	12,5	11,0	10,6

Խաղողի համախառն բերքը **նվազել է**՝ Գեղարքունիքի մարզում՝ 0 հազ. տ, Լոռու մարզում՝ 0 հազ. տ, Կոտայքի մարզում՝ 0 հազ. տ, Շիրակի մարզում՝ 0 հազ. տ, Սյունիքի մարզում՝ 0 հազ. տ, Վայոց ձորի մարզում՝ 0.1 հազ. տ:

Խաղողի ընդամենը համախառն բերքը *ավելացել է* 46,1 հազ. տ, որից՝ Արագածոտնի մարզում՝ 1,2 հազ. տ, Արարատի մարզում՝ 19,5 հազ. տ, Արմավիրի մարզում՝ 24,7 հազ. տ, Տավուշի մարզում՝ 0,7 հազ. տ, որը շատ դրական է արձանագրվում:

3.9. Խոշոր եղջերավոր կենդանիների գլխաքանակը հունվարի 1-ի դրությամբ, ըստ մարզերի

աղյուսակ 3.9

	գլուխ			
	2020	2021	2022	2023
ՀՀ ընդամենը	579256	613413	559627	501862
որից՝ ք. Երևան	3569	3527	3930	3486
Արագածոտն	68215	71554	64698	57718
Արարատ	40116	45367	42234	38058
Արմավիր	54255	57583	55216	52987
Գեղարքունիք	97071	103019	94043	81536
Լոռի	72795	78168	74473	70774
Կոտայք	52119	54292	50777	45110
Շիրակ	87095	90879	79181	70082
Սյունիք	52147	52350	42314	37028
Վայոց ձոր	19699	21247	18501	16032
Տավուշ	32175	35427	34260	29051

2023թ –ից 2020թ – ի հետ համեմատ, խոշոր եղջերավոր կենդանիների ընդամենը գլխաքանակը *նվազել է*՝ 77394 գլուխ, որից՝ Երևանում՝ 83 գլուխ, Արագածոտնի մարզում՝ 10497 գլուխ, Արարատի մարզում՝ 2058 գլուխ, Արմավիրի մարզում՝ 1268 գլուխ, Գեղարքունիքի մարզում՝ 15535 գլուխ, Լոռու մարզում՝ 2021 գլուխ, Կոտայքի մարզում՝ 7009 գլուխ, Շիրակի մարզում՝ 17013 գլուխ, Սյունիքի մարզում՝ 15119 գլուխ, Վայոց ձորի մարզում՝ 3667 գլուխ, Տավուշի մարզում՝ 3124 գլուխ, որը շատ բացասական է արձանագրվում:

Անասնագլխաքանակի գլխաքանակի անկման հիմնական պատճառը անասնակերի պակասությունն է, որի արդյունքում՝ թակացել է անասնակերի վաճառքի գնի վրա, հետևաբար՝ թանկացել է նաև մսի վաճառքի գինը:

3.9.1 Կովերի գլխաքանակը հունվարի 1-ի դրությամբ, ըստ մարզերի

աղյուսակ 3.9.1

	գլուխ			
	2020	2021	2022	2023
ՀՀ ընդամենը	251716	265810	246127	222065
որից՝ ք. Երևան	829	765	983	865
Արագածոտն	31270	33791	31490	27343
Արարատ	13275	14394	13393	13013
Արմավիր	16346	17493	16888	15561
Գեղարքունիք	45268	47410	44004	40202
Լոռի	34755	37509	36513	34981
Կոտայք	24037	24395	22479	19221
Շիրակ	40986	42761	37566	32356
Սյունիք	22753	23082	19753	17700
Վայոց ձոր	8112	8618	7733	6821
Տավուշ	14085	15592	15325	14002

2023թ –ից 2020թ – ի հետ համեմատ, կովերի ընդամենը գլխաքանակը **նվազել է՝** 29651 գլուխ, որից՝ Արագածոտնի մարզում՝ 3927 գլուխ, Արարատի մարզում՝ 262 գլուխ, Արմավիրի մարզում՝ 785 գլուխ, Գեղարքունիքի մարզում՝ 5066 գլուխ, Կոտայքի մարզում՝ 4816 գլուխ, Շիրակի մարզում՝ 8630 գլուխ, Սյունիքի մարզում՝ 5053 գլուխ, Վայոց ձորի մարզում՝ 1291 գլուխ, Տավուշի մարզում՝ 83 գլուխ, որը շատ բացասական է արձանագրում:

2023թ –ից 2020թ – ի հետ համեմատ, կովերի ընդամենը գլխաքանակը **ավելացել է՝** Երևանում՝ 36 գլուխ, Լոռու մարզում՝ 226 գլուխ, որը շատ դրական է արձանագրվում:

3.9.2 Խոզերի գլխաքանակը հունվարի 1-ի դրությամբ, ըստ մարզերի

աղյուսակ 3.9.2

	2020		2021		2022		2023	
	Խոզեր, ընդամենը	որից՝ մայր խոզեր	Խոզեր, ընդամենը	որից՝ մայր խոզեր	Խոզեր, ընդամենը	որից՝ մայր խոզեր	Խոզեր, ընդամենը	որից՝ մայր խոզեր
ՀՀ ընդամենը	223252	42796	200221	37598	166095	34823	180805	29654
որից՝ ք. Երևան	25650	10669	28995	9383	28111	10363	30070	3664
Արագածոտն	20044	3511	15557	2893	10976	2319	10539	2043
Արարատ	22784	3502	21650	3547	16473	2810	16244	2826
Արմավիր	29416	4660	21367	3581	18042	3193	20043	3683
Գեղարքունիք	16218	2994	17009	3061	12569	2156	10498	1918
Լոռի	15312	2951	13738	2773	13260	2723	20522	3720
Կոտայք	28440	4106	28446	4005	22763	3654	22806	3306
Երկրի պարենային ապահովվածության հիմնախնդիրը յուրաքանչյուր երկիր կարգավորում (լուծում) է յուրովի: Գոյություն ունի երկրի պարենային ապահովության բավարարման երեք հիմնական տարբերակ:

Առաջինը և համեմատաբար հազվադեպ կիրառվողն այն տարբերակն է, երբ երկիրը բոլոր պարենային ապրանքներով ինքնաբավ է: Երկրորդ տարբերակի դեպքում երկրի պարենային ապահովումը հիմնականում կախված է արտաքին շուկայից: Երրորդ, ամենատարածված տարբերակը հիմնվում է երկրի համեմատական առավելությունների վրա և ըստ տնտեսական նպատակահարմարության՝ արտահանում ու ներմուծում պարենային ապրանքներ:

Աշխարհի բնակչության պարենային ապահովման ամենակարևոր մարտահրավերներից մեկը ամենաուղղակի իմաստով հացի խնդրի լուծումն է: Ուստի առավել հանգամանորեն դիտարկենք պարենի համաշխարհային շուկայում հացահատիկի առևտրի ծավալների և գների զարգացման միտումները: Ի սկզբանե արձանագրենք, որ հացահատիկի համաշխարհային գների վրա առավել ազդեցիկ են հետևյալ գործոնները.

1. Արտահանող որևէ երկրի կողմից հացահատիկի արտահանման արգելքի կիրառումը,
2. Արտահանող որևէ երկրում հացահատիկի արտադրության ծավալների նվազումը,
3. Հիմնական ներմուծող երկրներում բարձր բերքի ստացումը,
4. Ինֆլյացիայի համաշխարհային մակարդակը,
5. Տնտեսապես հզոր երկրներում տոկոսադրույքի փոփոխությունը,
6. ԶԼՄ-ում լուրերի շահարկումը,
7. Հացահատիկի պաշարների մասին հաշվետվությունները:

Ներկայումս հացահատիկի համաշխարհային շուկայում վաճառքի կեսից ավելին բաժին է ընկնում ցորենին: Այս կարևոր արտադրանքի համաշխարհային արտադրության և սպառման վերջին տարիների շարժընթացը ցույց է տալիս, որ այդ ցուցանիշներն ունեն աճի միտում:

Ըստ ՄԱԿ –ի Պարենի Գյուղատնտեսական կազմակերպության տվյալների, **ցորենի արտադրության 10 համաշխարհային հսկաները 2022թ-ին կազմում են հետևյալ երկրները՝**

h/h	Արտադրող երկիրը	Տոկոսային մասնաբաժինը ընդհանուր համաշխարհային արտադրությունում	Արտադրության քանակը, մլն տ
1.	Չինաստան	18 %	138
2.	ԵՄ –ն ընդհանուր	17 %	134,3
3.	Հնդկաստան	13 %	103
4.	Ռուսաստան	12 %	91
5.	ԱՄՆ	6 %	44,9
6.	Ավստրալիա	5 %	36,6
7.	Կանադա	4 %	33,8
8.	Պակիստան	3 %	26,4
9.	Ուկրաինա	3 %	20,5
10.	Թուրքիա	2 %	17,2

2021թ –ին ցորեն արտահանող 5 հսկա երկրներն են՝

Արտահանող երկիրը	Արտահանման գումարը մլդ դոլար	Տոկոսային մասնաբաժինը ընդհանուր ծավալում
Ռուսաստան	7,3	13,1 %
ԱՄՆ	7,29	13,1 %
Ավստրալիա	7,2	13 %
Կանադա	6,61	11,9 %
Ուկրաինա	4,7	8,5 %

2022թ –ի ցորենի համաշխարհային խոշոր ներկրողներն են

Ներմուծող երկիրը	Ներմուծման ծավալը, մլն տ	Մեփական արտադրությունը, մլն տ
Հյուսիսային Աֆրիկա	29,2	17,2
Հարավ- Արևելյան Ասիա	26	0
Մերձավոր Արևելք	23	17,6
Չինաստան	9,5	13,5
Բանգլադեշ	7	1,1

Հացահատիկի համաշխարհային գները 2022թ –ի դեկտեմբերի 7 –ի տվյալներով

երկիրը	Արգենտինա	ԱՄՆ	Կանադա	Ավստրալիա	ԵՄ	Ռուսաստան
Հացահատիկի 1տ –ի գինը, ԱՄՆ դոլարով	397	385	371	367	332	316

Ուկրաինա-Ռուսաստան պատերազմի արդյունքում, Ուկրաինաում հացահատիկի բերքը նախորդ տարիներին կազմել է 33 մլն տ, իսկ 2022-2023 –ի՝ 20 մլն տ և դրանից կարողացել են արտահանել 42 % -ը (մինչև 11 մլն տ):

Ցորենի փոխանցվող պաշարների և սպառման ծավալների ուսումնասիրության համար հատկապես կարևոր է դեկտեմբերի դրությամբ առկա ռեսուրսների և օգտագործման հաշվեկշռի կազմումը: Բան այն է, որ դեկտեմբերին հիմնականում դադարում է արտադրության հաշվին ռեսուրսների ավելացումը և առավել տեսանելի է դառնում փոխանցվող պաշարի շարժը:

Աշխարհում գյուղատնտեսական հողերի տարածքը գնալով կրճատվում է, մասամբ ուրբանիզացման, մասամբ էլ՝ բնապահպանական խնդիրների թելադրանքով: ՊԳԿ-ի կանխատեսումներով՝ առաջիկա 40 տարիների ընթացքում ամբողջովին կսպառվի վարելահողերի ընդարձակման հնարավորությունը, իսկ ռոռզման ջրի վերականգնվող պաշարների 70%-ը ներկայումս օգտագործվում է: Հետևաբար, բնակչության պարենային անվտանգության ապահովման համար բնական ռեսուրսների խնայողաբար օգտագործումը և ագրարային արտադրության մեջ նորամուծական տեխնոլոգիաների լայնամասշտաբ կիրառությունն այլընտրանք չունեն: Բայց պետք է նկատի ունենալ, որ այդ ռազմավարությունը հատկապես սկզբնական շրջանում մեծացնում է արտադրության ծախսատարությունը, ինչը, իր հերթին, ազդում է պարենային ապրանքների գների բարձրացման վրա: Համաշխարհային պարենային շուկայի վրա ազդող վերոհիշյալ գործոնները

հատկապես ծանր պայմաններ են ստեղծում ներմուծող երկրների համար: Ուստի անխուսափելի է դառնում ներքին ռեսուրսների մոբիլիզացման և նորամուծական տեխնոլոգիաների ներդրման շնորհիվ պարենային ինքնաբավության մակարդակի բարձրացումը:

Երկրում պարենի ապահովության հիմնական ցուցանիշներից է հանդիսանում սպառողական գների ինդեքսը (ՄԳԻ):

Սպառողական գների ինդեքսը գների ինդեքս տեսակ, որը ստեղծված է բնակչության անձնական սպառման համար ձեռք բերված ապրանքների և ծառայությունների փաստացի հաստատագրված կազմի սպառողական զամբյուղ արժեքի փոփոխությունը որոշակի ժամանակահատվածում:

Տնտեսագիտական ուսումնասիրությունների ժամանակ կարևորագույն խնդիր է հանդիսանում բնակչության կենսամակարդակի գնահատումը և դրա բարձրացման հիմնախնդիրները:

Կենսամակարդակը ապրանքների և ծառայությունների այն քանակն է, որը հնարավորություն ունի ձեռք բերելու տվյալ երկրի բնակչությունը: Կենսամակարդակ հասկացությունը բավականին լայն հասկացություն է, և գոյություն չունի կոնկրետ ցուցանիշ, որով գնահատվում է այն: Կենսամակարդակի գնահատման համար օգտագործվում են տարբեր ցուցանիշներ, որոնցից է օրինակ մեկ շնչին բաժին ընկնող ՀՆԱ-ի ցուցանիշը: Վերջիններս որոշելու համար տվյալ երկրի ՀՆԱ-ի ցուցանիշը հարաբերում ենք երկրի բնակչության թվի վրա: Սակայն պետք է նշենք, որ այս ցուցանիշով կենսամակարդակը գնահատել այդքան էլ ճիշտ չէ, քանի որ ցուցանիշի հաշվարկման ժամանակ վերցնում ենք տվյալ տարվա ՀՆԱ-ն, իսկ այն իր մեջ պարունակում է գնային ազդեցություն, հետևաբար հստակ չենք կարող ասել փոփոխության է ենթարկվել կենսամակարդակը, թե գները: Այս հակասությունը լուծելու համար օգտվում ենք գների ինդեքսից: Ընդհանուր առմամբ ինդեքսը հարաբերական ցուցանիշ է, որը ցույց է տալիս երևույթի կամ գործընթացի փոփոխությունը ժամանակի կամ տարածության մեջ: Գոյություն ունեն գների ինդեքսի տարբեր ցուցանիշներ, որոնցից կենսամակարդակի բնութագրման համար հատկապես կիրառվում է սպառողական գների ինդեքսը: ՄԳԻ-ն ցույց է տալիս սպառողական զամբյուղի մեջ ընդգրկված ապրանքների ու ծառայությունների գնային փոփոխությունները ժամանակի ընթացքում:

2023թ –ի սպառողական գների ինդեքսը նախորդ տարվա համապատասխան ժամանակաշրջանի նկատմամբ, կազմել է 108,1%:

Տարբերում են պարենային և սպառողական զամբյուղներ հասկացողությունները:

ա) Պարենային զամբյուղ

Պարենային զամբյուղը մարդուն մեկ ամսվա համար անհրաժեշտ մթերքի հավաքածուն է: Զամբյուղի պարունակությունը հաշվարկվում է՝ ելնելով մարդու ֆիզիկական պահանջները բավարարող մթերքների օգտագործման նվազագույն նորմերից:

Նվազագույն սպառողական զամբյուղը բաղկացած է երկու մասից՝ նվազագույն պարենային զամբյուղ և ոչ պարենային ապրանքների ու ծառայությունների արժեք:

Նշենք, որ նվազագույն պարենային գամբյուղի արժեքը հաշվարկվում է ՀՀ առողջապահության նախարարության կողմից մշակված՝ սննդամթերքի կազմի, կառուցվածքի և էներգետիկայի մեթոդաբանության համաձայն:

Պարենային գամբյուղի արժեքը կազմում է **42 հազար 21 դրամ**՝ ամսական կտրվածքով, որը 2021 թվականի նույն ժամանակահատվածում կազմել էր 38 հազար 687 դրամ: Ըստ Վիճակագրական կոմիտեի՝ մեկ ամսում սպառված սննդամթերքի արժեքը, 1 մեծահասակի հաշվով, կազմել է ընդամենը 42 հազար 21 դրամ:

Այս գումարին համարժեք ցանկում ներառված են հացամթերքը, մսամթերքը, ձկնամթերքը, կաթնամթերքը, ձուն, յուղն ու ճարպը, միրգը, բանջարեղենը, կարտոֆիլը, շաքարը, ոչ ակոհոլային խմիչքը և այլ սննդամթերք: Օրական փաստացի սպառումը, 1 շնչի հաշվով, 461 գրամ կազմել է հացամթերքը, 48.3 գրամ՝ մսամթերքը, 18.6 գրամ՝ ձուն, 203.7 գրամ՝ բանջարեղենը, և այլն: Տավարի մսի 100 գրամը երևանյան սուպերմարկետներում, խանութներում գերազանցում է 350-450 դրամը, ձկնամթերքից «Իշխան» ձկնատեսակի 100 գրամը մոտ 300 դրամ է կազմում, երկու հատ ձուն ընդհանուր մինչև 160 դրամ է, իսկ, ահա, 90-100 գրամ հացը սկսում է 150-170 դրամից:

Մրան գուգահեռ՝ նկատենք, որ մեր հանրապետությունում կենսաթոշակի նվազագույն չափը կազմում է ավելի քան 31 հազար դրամ, նվազագույն աշխատավարձը՝ 75 հազար դրամ է. այս դեպքում մարդիկ անգամ սննդի այդ նվազագույնն էլ չեն կարող ձեռք բերել: Ստացվում է, որ **սպառողական գամբյուղի արժեքը գերազանցում է նվազագույն աշխատավարձի չափը**, իսկ կոմունալ վարձերի, անհրաժեշտ դեղորայքի, հագուստի ու կոշիկի մասին լռում ենք»:

բ) Սպառողական գամբյուղ

Չկա աշխարհում մի պետություն, որի համար իր երկրի քաղաքացիների առաջնային խնդիրների ու պահանջների բավարարումը առաջնային լուծվելիք ու կարևոր հարց չլինի: Դրա համար էլ յուրաքանչյուր պետություն փորձում է հաշվարկել կենսական պայմանները ապահովող այն ապրանքների ցանկը և ծավալը, որոնք սպառողը օգտագործելով՝ կարող է իր նվազագույն կենսապայմանները բավարարել և այդպիսով գոյատևել:

Սպառողական գամբյուղը ապրանքների և ծառայությունների այն քանակն է, որն անհրաժեշտ է տվյալ երկրի բնակչության կենսական պահանջմունքների բավարարման համար: Սպառողական գամբյուղի կազմը և կառուցվածքը տարբեր է լինում՝ կախված ոչ միայն երկրի տնտեսական զարգացվածության աստիճանից, այլ նաև տվյալ բնակչության ազգային սովորություններից և առանձնահատկություններից: Հարկ է ապրանքների միևնույն քանակական հավաքակազմը գնահատել երկու տարբեր ժամանակահատվածների գներով, այնուհետ հարաբերել հաշտու շրջանի ցուցանիշը բազիսայինին:

Սպառողական գամբյուղը գնորդի կողմից ընտրված ապրանքների ու ծառայությունների ամբողջությունն է, որը սպառողի համար ունի որոշակի արժեք, այսինքն՝ սպառողը պատրաստ է դրա համար վճարել:

Թե սպառողական գամբյուղի մեջ ինչ մթերքներ են ներառված, ամեն պետության որոշելու հարցն է, իսկ հաշվարկները կատարվում են հետևյալ ձև՝ տարբեր

գերատեսչություններ ներկայացնում են որոշակի հաշվարկներ Առողջապահության նախարարությանը, որն էլ իր հերթին հրապարակում է այդ սպառողական զամբյուղի անհրաժեշտ ծավալն ու մթերքների ցանկը: Պետությունն էլ իր հերթին այնպես է անում, որ անգամ նվազագույն աշխատավարձ ունեցող քաղաքացին կարողանա ամբողջապես գնել սպառողական զամբյուղում ներառված մթերքները:

Սակայն սպառողական զամբյուղը միայն մթերքներով չի ամբողջանում, այստեղ հավելյալ հաշվարկվում են նաև կոմունալ ծախսերը, տրանսպորտից օգտվելու հնարավորությունը, դեղամիջոցներ գնելը:

Հայաստանում սպառողական զամբյուղը, ամսական կտրվածքով, բավականին թանկացել է:

2023թ –ի փետրվար ամսվա դրությամբ, նվազագույն սպառողական զամբյուղի արժեքը, նախորդ տարվա չորրորդ եռամսյակի միջին ընթացիկ գներով, կազմել է 77 հազար 740 դրամ՝ ամսական կտրվածքով, մինչդեռ 2021 թվականի չորրորդ եռամսյակի միջին ընթացիկ գներով՝ սպառողական զամբյուղը կազմել էր 71 հազար 570 դրամ՝ ամսական կտրվածքով:

Նույն ժամանակահատվածի դրությամբ, **պարենային զամբյուղի արժեքը կազմել է 42 հազար 21 դրամ՝ ամսական կտրվածքով, որը 2021 թվականի նույն ժամանակահատվածում կազմել էր 38 հազար 687 դրամ:**

Ըստ Վիճակագրական կոմիտեի՝ մեկ ամսում սպառված սննդամթերքի արժեքը, 1 մեծահասակի հաշվով, կազմել է ընդամենը 42 հազար 21 դրամ:

Ստացվում է, որ սպառողական զամբյուղի արժեքը գերազանցում է նվազագույն աշխատավարձի չափը, իսկ կոմունալ վարձերի, անհրաժեշտ դեղորայքի, հազուստի ու կոշիկի մասին լռում ենք:

Շրջափակման մեջ գտնվող Արցախում, 2022թ –ի հետ համեմատ, նվազագույն սպառողական զամբյուղի արժեքը աճում է օրեցօր, բժշկական նորմաներով հաշվարկված, նվազագույն սպառողական զամբյուղի արժեքը կազմել է 88 հազար 86 դրամ, իսկ պարենային զամբյուղի արժեքը 49 հազար 766 դրամ, սակայն հիմա բնակչության առաջին անհրաժեշտության պարենամթերքի առումով, պարենային անվտանգության ապահովության վիճակը է՛լ ավելի է վատացել, սպառնում է սով:

Պարենային անվտանգության համակարգը հենվում է հինգ հենասյուների վրա, դրանք են՝ պարենի ֆիզիկական մատչելիությունը, պարենի սոցիալտնտեսական մատչելիությունը, պարենային անկախության մակարդակը, պարենային պահուստները և սննդամթերքի անվտանգությունը

Ներկայացված ցուցանիշները ցույց են տալիս, որ տնտեսությունը խոշոր վնասներ է կրում ներմուծման արդյունքում, որը բացասաբար է ազդում հանրապետության արտաքին առևտրի հաշվեկշռի վրա: Այստեղ պետք է ուշադրություն դարձնել մակարոնեղենի և պանրի ներկրման ծավալների աճին, քանի որ ՀՀ-ն մակարոնեղեն արտադրող և պանիր արտահանող երկիր է: Ներմուծման ծավալների աճի պատճառը պարզ է, քանի որ ներմուծվում է պանրի և մակարոնեղենի այնպիսի տեսականի, որը շուկայում առկա չէ և որը ՀՀ-ում պանիր արտադրելու տեսանկյունից անհնար է, իսկ մակարոնեղենի ներմուծումը մտահոգության առիթ է տալիս, քանի որ կան բոլոր նախադրյալները որակով արտադրանք թողարկելու համար: Այս առումով կարևորվում է հայրենական արտադրանքի մրցունակության բարձրացման

կարևորության և ռազմավարության մշակումը, որի հիմքում պետք է ընկած լինի նորագույն տեխնոլոգիաների ներդրումը, միջազգային փորձի կիրառումը և միջազգային շուկաների մարքեթինգը:

Ինչպես հայտնի է, սննդարդյունաբերությունը հումքային բազայով ապահովող գյուղատնտեսության ճյուղն է: Խորհրդային տարիներին սննդարդյունաբերության որոշ արտադրատեսակներ՝ կոնյակը, գինին, պանիրը, մրգերի և բանջարեղենի պահածոները, հանքային ջրերը, մեծ հեղինակություն էին վայելում արտերկրում, և կայուն պահանջարկի ու մրցունակ լինելու շնորհիվ արտադրանքի շուրջ 60%-ը արտահանվում էր: Ներկայում պատկերն այլ է, քանի որ արտաքին շուկան արտադրանքի առումով բավական հագեցած է, մրցակից երկրներում ներդրվել են նորագույն տեխնոլոգիաներ և ստանդարտներ, ինչի արդյունքում ՀՀ արտադրանքն արտաքին աշխարհում դժվարություններ է ունենում մրցակցության, ստանդարտների համապատասխանեցման գործընթացի առումով և այլ հարցերում:

Բավական ցածր է հանրապետությունում թողարկվող արտադրանքի տեխնիկական ապահովվածության մակարդակը, քանի որ սննդամթերք վերամշակող կազմակերպությունները զինված են դեռևս խորհրդային տարիների արտադրության սարքավորումներով, և դրանց մի մասը չի համապատասխանում համաաշխարհային և, հատկապես, եվրոպական շուկայի ստանդարտներին ու պահանջներին: Այս առումով կարևոր է գյուղատնտեսական հումք վերամշակող ձեռնարկությունների նորագույն տեխնիկայով և տեխնոլոգիայով վերազինումը, այդ նպատակով նաև արտաքին աղբյուրների ֆինանսների ընդգրկման միջոցով, մասնավորապես, պետական աջակցությամբ ֆինանսավորումը: Դրված նպատակին հասնելու համար մեծ նշանակություն ունի նաև վարկային միջոցների արդյունավետ օգտագործումը, մանավանդ որ ներկայումս առևտրային բանկերի մի մասն ի գործու չէ իրականացնել խոշոր ծավալների վարկավորում, քանի որ վերջիններս նույնպես ունեն ֆինանսական ռեսուրսների խնդիրներ: ՀՀ առևտրային բանկերի կողմից վարկավորումն իրականացվում է հիմնականում արտաքին ռեսուրսների հաշվին՝ միջազգային ծրագրերի շրջանակներում (KfW, World Bank, EBRD և այլն):

Այդ ամենով հանդերձ նշենք, որ ՀՀ-ում գործում են մի շարք ձեռնարկություններ, որոնք զինված են եվրոպական արտադրության սարքավորումներով և տեխնոլոգիաներով, ինչը հնարավորություն է ընձեռում արտադրել միջազգային ստանդարտներին համապատասխան բավական բարձրորակ արտադրանք, որը մրցունակ կլինի արտաքին շուկաներում և կգտնի իր տեղը միջազգային շուկայում:

ՀՀ -ում թողարկվող հայրենական արտադրանքի տեսականու ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ որոշ ապրանքների գծով համեմատական առավելությունն ակնհայտ է: Օրինակ, կաթնամթերքի արտադրությունը, հատկապես պանրի արտադրությունը և արտահանումը, որը նվազագույն սպառողական զամբյուղի տեսականի է և որը կարևորվում է պարենային անվտանգության հիմնախնդրի լուծման տեսանկյունից: Կարևոր են նաև սննդարդյունաբերության ճյուղի մասնագիտացումը և արտադրության զարգացումը, մասնավորապես, հանքային ջրերի, բնական հյութերի, պահածոների, մսամթերքի, գինու և կոնյակի, ոգելից խմիչքների մասով: Սննդամթերքի առանձին տեսակների, ներառյալ խմիչքի արտադրության ծավալների ցուցանիշները բնեղեն արտահայտությամբ ավելացել են, թեև որոշների ցուցանիշները շարունակում են մնալ մտահոգիչ:

Ուսումնասիրելով ՀՀ պարենային անվտանգության հիմնահարցերի միայն մի փոքր մասը, մասնավորապես, պարենի առանձին տեսակների առկայության, ինքնաբավության մակարդակի, տեղական արտադրության ներուժի, արտաքին առևտրի ցուցանիշները, ինչպես նաև զարգացման հնարավորությունները և հեռանկարը, կարծում ենք, որ ՀՀ պարենային ինքնաբավության մակարդակը դեռևս գտնվում է անբավարար վիճակում: Դրա վառ ապացույցը սննդամթերքի և պարենի տեսականու մեծ մասի արտաքին առևտրի բացասական հաշվեկշիռն է, ինչպես նաև պարենային հաշվեկշիռը, որի ցուցանիշները, կարևորագույն պարենի առանձին տեսակների գծով դեռևս գտնվում են ոչ բավարար վիճակում: Այս ամենը ցորենի, շաքարավազի, բուսական և կենդանական յուղի, տավարի, խոզի և հավի մսի հայրենական արտադրության փոքր ծավալների հնարավորության հետևանք է, որի պատճառով վերոնշյալ տեսականին հիմնականում ներմուծվում է:

Պարենի ներմուծումը բացասաբար է ազդում երկրի տնտեսական և պարենային անվտանգության վրա: ՀՀ-ն որպես ներկրող երկիր ներմուծում է սննդամթերքի այնպիսի տեսականի, որի հայրենական արտադրությունը բավարար մակարդակի վրա է և որակի առումով չի զիջում ներկրված ապրանքին: Այս դասին են պատկանում, օրինակ, բնական հյութերը, յոգուրտները, ջեմերը, տավարի, խոզի և հավի մսերը և այլն: Կաթնամթերքի արտադրության կազմակերպման առկա բացը լրացնելու համար ներկրվում է կաթի փոշի, որն անասնաբուժական տվյալ մթերքի արտադրության ծավալների փոքր լինելու պատճառ է: Թեև ՀՀ-ում կաթի արտադրությունը գտնվում է բավարար վիճակումև տարեցտարի զարգանում է անասնաբուծությունը, մասնավորապես, ներկրվում են բարձր մթերատու երինջներ և ցլեր՝ Հոլշտին, Շվից, Սիմենտալ և այլ ցեղատեսակներ՝ մթերատվության և արտադրության ծավալներն ավելացնելու նպատակով, սակայն այդ միջոցառումները դեռևս բավարար չեն նշված պարենի տեսակներով հանրապետության ինքնաբավությունն ապահովելու համար:

ՀՀ գյուղի և գյուղատնտեսության ՀՀ զարգացման ռազմավարության դրույթներից են բխում հացահատիկի ցանքատարածությունների ընդլայնումը և բարձր էլիտար սերմերով մթերատվության բարձրացումը, անասնապահության զարգացումը, կերային բազայի ապահովումը և այլն:

ՀՀ կառավարությունը պետք է անի հնարավորինը պարենային անվտանգության բավարար մակարդակի ապահովման համար, ինչը ներառում է պարենի առկայության, տնտեսական անվտանգության ապահովումը պարենի հատկապես սպառողական զամբյուղում առկա տեսականու մասով, գների կայունության ապահովումը և այլն: Այս առումով կարևոր ենք համարում պարենի գների մատչելիության և կայունության ապահովումը, որի իրագործողը և պատասխանատուն, համաձայն ՀՀ Մահմանադրության (փոփոխություններով), ՀՀ ԿԲ-ն է:

Այստեղ մեծ է նաև Հայաստանի Հանրապետության տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի դերը, որն ապահովում է ազատ մրցակցությունը ներքին շուկայում և չարաշահումների դեպքում կիրառում է պատժամիջոցներ: Հանձնաժողովը պետք է օգտագործի ՀՀ իրավական ակտերով նախատեսված բոլոր լիազորությունները մրցակցության բնականոն գործընթացը

հանրապետությունում ապահովելու համար և գների սահմանման առումով պետք է կիրառի ավելի խստացված վարչարարություն:

Հայաստանի Հանրապետությունը, որպես ազատ շուկայական տնտեսություն ունեցող երկիր, դեռևս ի գորու չէ առանց պետական միջամտության ապահովել ազատ շուկայական տնտեսությանը բնորոշ հատկանիշներով միջավայր, քանի որ առկա են պարենի հիմնական տեսականու ներկրման մենաշնորհներ, որոնց պարագայում գները թելադրվում և սահմանվում են առանց ազատ մրցակցության և գնագոյացման շուկայական ապրանքների:

Բարձրացված հիմնախնդիրների լուծումը ներկայիս հրամայականն է, որը կնպաստի ազգաբնակչության սոցիալ-տնտեսական վիճակի բարելավմանը, կենսամակարդակի բարձրացմանը, ինչպես նաև ՀՀ տնտեսության զարգացմանը և հզորացմանը:

6. Հայաստանի Հանրապետությունում պարենամթերքի անվտանգության ապահովման խնդրի բարելավման հետ կապված առաջարկություններ

Հանրապետության ազգային պարենային հաշվեկշռի տվյալների վերլուծությունը վկայում է, որ կարևորագույն սննդամթերքների ինքնաբավության մակարդակը 2022 թվականի տվյալներով, հանրապետությունում ինքնաբավության բարձր մակարդակ է ապահովվում՝ կարտոֆիլի, բանջարաբոստանային մշակաբույսերի, պտղի, խաղողի, ոչխարի և այծի մսի, ձվի և ձկան ուղղությամբ, միջին մակարդակից բարձր ինքնաբավության մակարդակ գոյություն ունի խոշոր եղջերավորների մսի, կաթի և կաթնամթերքի համար, իսկ ցորենի, հատիկազանդեղեն մշակաբույսերի, բուսական յուղի, թռչնի և խոզի մսի ինքնաբավության մակարդակը շարունակում է մնալ ցածր:

Ընդհանուր առմամբ, երկրում կարևորագույն սննդամթերքներով պարենային ապահովության ցուցանիշները գնալով նվազում են, որը շատ մտահոգիչ է:

Այս մասին ահազանգում են նաև պարենային անվտանգության ապահովման խնդիրներով զբաղվող մասնագետները:

Պարենային մթերքների գծով ունենք ծանր վիճակ, ամենակարևորը հացն է, որի ինքնաբավության մակարդակը տարեցտարի իջնում է, բուսական յուղի առումով անգամ 1 տոկոս ինքնաբավություն չունենք, թռչնամսի առումով ինքնաբավությունը մեր խոցելի կողմն է՝ այստեղ խնդիրը կերն է: Պարենային ցուցանիշների տարեցտարի նվազմանը գումարվեց նաև դարաբաղյան պատերազմի թողած աղետալի հետևանքները:

Թռչնաբուծության, խոզաբուծության ոլորտներում անասնակերը մեծ խնդիր է: Կովաբուծության և ոչխարաբուծության առումով նախորդ երաշտային տարվա խոտի կտրուկ պակասը վատացրել է իրավիճակը:

Բարձր ինքնաբավություն են ապահովում միրգ-հատապտուղը, խաղողը, կաղամբը, որոնց առումով 100 տոկոսից ավելի է ինքնաբավությունը:

Ըստ Էկոնոմիկայի նախարարության գնահատականի՝ պարենամթերքի հասանելիությամբ Հայաստանն ունի 56 տոկոս, մատչելիության բաղադրիչով՝ 65,3, որակի և անվտանգության մասով՝ 65,8 տոկոս մակարդակ՝ 2020 թվականի

դրությամբ: Պատկերը թարմացնելու համար մշակել են պարենային անվտանգության նոր ռազմավարություն ու միջոցառումների ծրագիր:

Էկոնոմիկայի նախարարությունից հորդորում են գարնան մոտենալու հետ դաշտերում գործը սկսող գյուղացուն այգիներն ու բանջարանոցներն անմշակ չթողնել: Նրանք վստահեցնում են՝ այս տարի նույնպես գյուղացուն կօգնեն թունաքիմիկատ ձեռք բերելու հարցում, տեղյակ են նաև պարարտանյութի աննախադեպ թանկացման մասին:

Նախարարության պատասխանատուն վստահեցրեց, որ պարարտանյութի գնի մոտավորապես 50 տոկոսի չափ սուբսիդավորում է նախատեսվում, ***սակայն դա տեղի չունեցավ:***

Երկրի պարենային ապահովության տեսակետից, հատկապես կարևորվում է ՀՀ ագրարային ներուժի արդյունավետ օգտագործումը, պարենի կորուստների նվազեցումը և ԵԱՏՄ շրջանակում պարենային անվտանգության միասնական հիմնադրամի ձևավորումը: Վերջինս կարող է հանդիսանալ անդամ երկրների գյուղատնտեսական հումքի և պարենի առևտրի կայուն զարգացման երաշխիք:

Միջազգային պրակտիկայում երկրների պարենային անվտանգության դիրքը գնահատվում է պարենային անվտանգության գլոբալ ինդեքսով, որը բաղկացած է 3 բաղադրիչից՝ պարենամթերքի մատչելիություն, հասանելիություն, որակ և անվտանգություն, որոնցից յուրաքանչյուրն իր հերթին ձևավորվում է մի քանի գործոններով: 2019 թվականին առաջին անգամ Հայաստանում կատարվել է պարենային անվտանգության գլոբալ ինդեքսի հաշվարկ, որի արդյունքներով Հայաստանի պարենային անվտանգության գլոբալ ինդեքսը կազմել է 57.1, այդ թվում՝ պարենամթերքի մատչելիության մասով՝ 51.7, հասանելիության մասով՝ 66.2, որակի և անվտանգության մասով՝ 45.4:

Յուրաքանչյուր երկրի պարենային անվտանգությունը համարվում է ապահովված, եթե առկա է տնտեսության այնպիսի մակարդակ, որն երաշխավորում է բնակչության համար առողջապահական նորմերին համապատասխանող սննդամթերքի ֆիզիկական ու տնտեսական մատչելիությունը, հասանելիությունը, որակը և անվտանգությունը:

Պարենամթերքի մատչելիության ապահովման նպատակով պարենային անվտանգության հիմնական ռազմավարական ուղղություններ են հանդիսանում համախառն ծախսերում սննդամթերքի վրա կատարվող ծախսերի ավելացումը, մեկ շնչի հաշվով համախառն ներքին արդյունքի ավելացումը, գյուղատնտեսական ապրանքների ներկրման տարիֆային կարգավորումները, աղքատության մակարդակի նվազեցումը, ազգաբնակչության տարբեր շերտերի սննդամթերքի մատչելիության և լիարժեք սննդով ապահովումը և այլն:

Պարենամթերքի հասանելիության ապահովման նպատակով պարենային անվտանգության հիմնական ռազմավարական ուղղություններ են հանդիսանում՝ սննդամթերքի բավարար պաշարների և կենսապես կարևորագույն պարենամթերքի պետական պահուստի առկայությունը, արտակարգ իրավիճակներում հնարավոր պարենային ճգնաժամերի առաջացման կանխարգելումը, տարածքային համաչափ զարգացումը, պարենամթերքի արժեշղթայի բնականոն գործունեության համար

անհրաժեշտ ենթակառուցվածքների առկայությունը, պարենամթերքի արտադրության, պահման և իրացման շղթայում առաջացող կորուստների նվազեցումը, պետության կողմից գյուղատնտեսության ոլորտում կատարվող ծախսերի ավելացումը և այլն:

Պարենամթերքի որակի և անվտանգության ապահովման նպատակով պարենային անվտանգության հիմնական ռազմավարական ուղղություններն են հանդիսանում՝ գյուղմթերքի ստանդարտների առկայությունը, սննդի որակի և անվտանգության ստանդարտների և համակարգերի ներդրումը և դրանց ապահովման նկատմամբ իրականացվող մոնիթորինգն ու վերահսկողությունը, բուսասանիտարական և անասնաբուժասանիտարական վիճակի բարելավումը, սնուցման ազգային ռազմավարության առկայությունը, որով պետք է նախանշվեն օգտագործվող սննդամթերքի բազմազանեցումը և սննդամթերքի միջոցով օրգանիզմի կենսագործունեության համար անհրաժեշտ սպիտակուցների, վիտամինների և միկրոտարրերի ստացման ապահովումը և այլն:

Հայաստանի Հանրապետության պարենային անվտանգության ռազմավարության վերը նշված ուղղությունները պետք է նախանշվեն և ներառվեն ՀՀ պարենային անվտանգության ապահովման նոր ռազմավարության և միջոցառումների ծրագրերում, որոնց ուղղությամբ աշխատանքներն ընթանում են:

Միայն պետության առաջարկած սուբսիդավորվող վարկերն ի գորու չեն փոխելու պատկերը, քանի դեռ գյուղացին չի կարողանում ըստ պահանջի ռոտման ջուր ստանալ: Պարաբաղյան պատերազմի հետևանքով արոտների և արտերի՝ Ադրբեջանի վերահսկողության տակ անցնելն ազդել է ցորենի և մսի ինքնաբավության վրա:

Հայաստանը սակավահող, ագրարային երկիր է և մեր բնական պաշարները (այդ թվում՝ վարելահողերը) պետք է արդյունավետ և խնայողաբար օգտագործել, այնինչ՝ “Հողի սեփականաշնորհման գործընթաց”-ից հետո, բազմաթիվ վարելահողեր մեր երկրում չեն մշակվում, տարիների ընթացքում, դրանք դեգրադացվել և դարձել են հետագա մշակության համար ոչ պիտանի և այդ թիվը տարեցտարի, գնալով ավելանում է: Վերոնշվածը ապացուցում են նաև արված սույն հետազոտության արդյունքները:

Այստեղ տեղին է հիշել ՄՍՀՄ տարիները, որի ժամանակ Հայաստանում բազմաթիվ քարքարոտ, աղիացված, խամ ու հոպան հողեր վեր անվեցին մշակելի վարելահողերի, ծախսվեցին հսկայական ֆինանսական միջոցներ և աշխատուժ:

Զարգացած բազմաթիվ երկրներում (օրինակ, Հոլանդիայում), նմուշի համար, անմշակ հողատարածք չես գտնի, իսկ սակավահող Հայաստանում, որքան ասես, այնինչ՝ մեզ համար մեկ քառակուսի մետր մշակելի վարելահողն էլ, կարևոր է և մեծ նշանակություն ունի:

Վարելահողերի անտերության մատնելու գործընթացը կարելի որակել, ոչ այլ ինչ, քան, որպես պետական դավաճանություն, հանցագործություն:

Ու սրա համար, ոչ մեկը, մինչև այժմ պատասխանատվություն չի կրել:

Ցավը նրանումն է, որ Հայաստանում յուրաքանչյուր նոր իշխանություն, քարոզարշավին, քննադատում է նախորդ իշխանությանը՝ վարելահողերի կեսից

ավելին անմշակ թողնելու համար, սակայն, երբ նրանք գալիս են իշխանության, անմշակ վարելահողերի մասին մոռանում են:

Արված հետազոտության արդյունքները ապացուցում են, որ Հայաստանում պարենամթերքի անվտանգության ապահովման խնդրի լուծման (լավացման, բարելավման) ու կատարելագործման համար, առաջնահերթ անհրաժեշտ է ավելացնել Հայաստանում արտադրվող առաջնային անհրաժեշտության մի քանի պարենամթերքների (մասնավորապես՝ հացահատիկային և հատիկալնդեղենային մշակաբույսեր, որից ցորեն; կարտոֆիլ; բանջարանոցային մշակաբույսեր; բոստանային մշակաբույսեր) արտադրության ծավալները:

Այդ նպատակով, առաջարկում եմ՝ կիրառելով համապատասխան ժամանակակից գյուղտեխնիկա և միջոցներ, Հայաստանի Հանրապետության նախկին դեգրադացված և չմշակվող վարելահողերը դարձնել մշակելի և այդ նոր ցանքատարածություններում մշակելով բնակչության համար առաջնային անհրաժեշտության պարենամթերքների ստացման համապատասխան մշակաբույսեր, Հայաստանում ավելացնել (շատացնել) պարենամթերքի ներքին արտադրության ծավալները, բարելավել պարենամթերքի անվտանգության ապահովման խնդիրը:

Ավելացնելով նաև կերային մշակաբույսեր տարածքները, կշատացնենք անասնակերի քանակը, կէժանանա անասնակերի (մասնավորապես՝ խոտի հակի) գինը, կհեշտանա անասուն պահելը, կշատանա անասնազլխաքանակը և կիջնի նաև անասունի մսի 1 կգ –ի վաճառքի գինը:

Գյուղատնտեսության ոլորտում հայտնի է գյուղատնտեսական մթերքների արտադրության ծավալների ավելացման 2 ուղղություն՝ էքստենսիվ և ինտենսիվ:

Գյուղատնտեսության **էքստենսիվ** եղանակի կիրառման դեպքում տեղի է ունենում արտադրանքի ծավալների ավելացում՝ նոր հողատեսքերի (մասնավորապես՝ վարելահողերի) մակերեսի ընդարձակման և անասունների գլխաքանակի ավելացման հաշվին:

Գյուղատնտեսության **ինտենսիվ** եղանակի կիրառման դեպքում, ոլորտում կիրառում են գյուղատնտեսության վարման առաջավոր նոր տեխնոլոգիաներ, նոր բարձր բերքատու մշակաբույսեր ու բարձր կաթնատու կենդանիներ, ինչպես նաև՝ ժամանակակից նորագույն գյուղտեխնիկա, կիրառում են բույսերը գյուղատնտեսական հիվանդություններից ու վնասատուներից պաշտպանելու և հողի պարարտացման ավելի արդյունավետ մեթոդներ:

2001թ ի մայիսին Հայաստանում ընդունվել է նոր «Հողային օրենսգիրքը», որի հողային հաշվեկշռի համաձայն՝ Հայաստանի հանրապետությունում վարելահողերն (ընդամենը 494,3 հազար հա, որից ոռոգվում է 117,4 հազար հա -ը) մարզերում ունեին հետևյալ բաշխվածությունը՝

Տարածքի (մարզի) անվանումը	Վարելահողեր, հազար հա
Երևան	2,2
Արագածոտն	56,2
Արարատ	30,0
Արմավիր	40,4
Գեղարքունիք	95,3

Լոռի	48,4
Կոտայք	40,6
Շիրակ	84,5
Սյունիք	48,3
Վայոց ձոր	20,6
Տավուշ	27,8
Ընդամենը	494,3

Տարիներ անց, առկա վարելահողերի տարածքները նվազեցին և ստացան հետևյալ տեսքը՝

տարին	2017թ	2018թ	2019թ	2020թ	2021թ
առկա վարելահողերը, հազար հա	446,0	445,6	444,8	444,0	443,2

2018 թվականին Հայաստանում առկա 445.6 հազ. հա վարելահողերից նպատակային օգտագործվել է ընդամենը 242.8 հազ. հա կամ շուրջ 54.5%, որը բավական ցածր ցուցանիշ է այսպիսի սակավահող երկրի համար:

Անմշակ վարելահողերի քանակը (թիվը) իշխանությունները չեն հրապարակում, (ամենայն հավանականությամբ՝ դիտավորյալ):

Խոսում են առկա 222 հազար հա մշակելի վարելահողերի մասին և ուղղակի հայտարարում են, որ չի մշակվում վարելահողերի կեսից ավելին, սակայն Ֆերմերային Շարժում ՀԿ –ի տվյալներով, այն ավելին է, քան ներկայացվում է:

Տեսականորեն, այդ թիվը կարել է ստանալ հետևյալ կերպ՝

$$C = A - B ,$$

որտեղ՝

C –ն վարելահողի չմշակված հողատարածքն է, հա,

A –ն վարելահողի ընդհանուր չափն է, հա,

B –ն վարելահողի վրա ցանված գյուղատնտեսական մշակաբույսերի զբաղեցրած հողատարածքն է (ցանքատարածքը), հա

B-ի մեջ մտնում են՝

- ✓ ցանված է աշնանացան 2021թ աշնանը, հատիկի ու կանաչ կերի համար,
- ✓ հացահատիկային և հատիկաընդեղենային մշակաբույսեր,
- ✓ գարնանացան հացահատիկային և և հատիկաընդեղենային մշակաբույսեր, տեխնիկական մշակաբույսեր,
- ✓ կարտոֆիլ,
- ✓ բանջարանոցային մշակաբույսեր,
- ✓ բոստանային մշակաբույսեր,
- ✓ կերային մշակաբույսեր:

B –ի տվյալները կարող են փոփոխվել:

Եթե մի պահ պատկերացնենք, որ Հայաստանի անմշակ վարելահողերը (212,4 հազար հա, 2022թ –ի դրությամբ, ընդհանուր վարելահողերի 50 % -ը) դարձրել ենք մշակովի, ապա գյուղատնտեսական հիմնական մշակաբույսերի և բազմամյա տնկարկների լրացուցիչ տարածությունները և համախառն բերքը՝ ցանքային տարածությունը

ընդամենը 212,4 հազար հա, հացահատիկային և հատիկաընդունային մշակաբույսեր 114,4 հազար հա և համախառն բերքը 241,9 հազար տ, որից՝ ցորեն 56,8 հազար հա և 138,6 հազար տ, կարտոֆիլ 19,3 հազար հա և 351,4 հազար տ, բանջարանոցային մշակաբույսեր 19,1 հազար հա և 610,6 հազար տ, բոստանային մշակաբույսեր 4,1 հազար հա 124,6 հազար տ:

Չմշակված վարելահողերը մշակելի դարձնելու դեպքում, կշատանա պահուստները, արտադրությունը, անասնակերի քանակությունը, սերմնացուլի քանակությունը, ինքնաբավության աստիճանը և սպառումը 1 շնչի հաշվով:

Անասնակերի քանակության շատացումը հնարավորություն կտա իջեցնել օգտագործվող անասնակերի արժեքը, որն էլ՝ իր հերթին, գյուղացիներին հնարավորություն կտա ավելացնել պահվող անասունների գլխաքանակը, իսկ արդյունքում՝ կնվազի մսի և կաթնեղենի գները:

Համապատասխանաբար, ավելացնելով կերային մշակաբույսերի տարածքները, կշատացնենք պահվող անասնագլխաքանակը, հետևաբար՝ արտադրվող մսի քանակը:

Ամփոփելով, պետք է նշել, որ Հայաստանում մշակելի դարձնելով և մշակելով երկրի անմշակ հողերը, մենք կշատացնենք երկրում պարենամթերքի ստացվող քանակը (արտադրության ծավալները) և կբարելավենք երկրի պարենային անվտանգության ապահովության խնդիրը:

Զարգացող երկրների գյուղատնտեսության զարգացման նպատակով, ՄԱԿ Պարենի և գյուղատնտեսության կազմակերպությունն իրականացնում է միջոցառումների մի ամբողջ համալիր, որը ստացել է «կանաչ հեղափոխություն» անվանումը: Դրանցից առավել լայնորեն կիրառվում են նոր, ավելի բարձր բերքատու մշակաբույսերի և բարձր մթերատու կենդանիների ընտրությունը կամ սելեկցիան, ժառանգական հատկանիշների բարելավումը (գենետիկան), պարարտացումը և հողաբարելավումը: Այդ միջոցառումների կիրառման շնորհիվ որոշ երկրներ (օրինակ՝ Մեքսիկան, Հնդկաստանը, Ֆիլիպինները, Չինաստանը) հասել են գյուղատնտեսական արտադրանքի ծավալի շոշափելի աճի:

Հայաստանի Հանրապետության պարենային ապահովությանը տարիներ շարունակ նպաստել է նաև Արցախը: Սակայն, վերջին ժամանակաշրջանի դարաբաղյան պատերազմը մեծ վնաս է հասցրեց նաև մեր երկրի գյուղատնտեսությանը, նաև՝ պարենամթերքի ապահովվածության առումով:

Արցախում կորցրել ենք մեծաքանակ խաղողի և պտղատու այգիներ, հիմնականում՝ նռան, ծիրանի, դեղձի, Արցախի ցանքատարածությունների 90 %-ը (ցորենի, գարու, սոխի, և այլն), մոտ 50.000 գլուխ գյուղատնտեսական կենդանիներ: Նախկինում, յուրաքանչյուր տարի, Արցախից ներկրվում էր 100.000 տոննա հացահատիկ, որը, Հայաստանում արտադրվածի հետ միասին, կազմում է մեր երկրի հացահատիկի պահանջմունքի մոտ 75 տոկոսը:

Ըստ վիճակագրության, ՀՀ-ում և Արցախում տարեկան 500-600 հազար տոննա հացահատիկ է սպառվում, Արցախն ապահովում էր դրա 20-30%-ը (հիմնականում՝ Քաշաթաղի, Հաղրութի, Մարտունու, Ասկերանի և Մարտակերտի շրջաններից): ՀՀ ներմուծվող ցորենի 90 %-ը գալիս է ՌԴ-ից մնացածը՝ Ուկրաինայից և Վրաստանից: Այսինքն՝ ՀՀ-ի սպառման 600 հազար տոննայից 250.000 տոննան ներմուծվում է:

Արցախից անասնապահության և բերքի կորուստը կազմում է մոտ 100-130 մլն դոլար՝ յուրաքանչյուր տարի: Սակայն, 2021թ.-ից կանգնած ենք պարենային անվտանգության լուրջ մարտահրավերի առջև:

Որոշ արտավայրեր կորցրեցինք նաև Հայաստանի Սյունիքի և Գեղարքունիքի մարզերից: Ներկայումս անասնակերի դեֆիցիտ է, որոշ գյուղացիներ ստիպված մորթում են իրենց անասուններին՝ անասնակեր չլինելու պատճառով, մյուսներն էլ մորթում են անասունների մի մասին, որ այդ գումարով անասնակեր ձեռք բերեն մնացած անասունների համար:

Հանրապետության ազգային պարենային հաշվեկշռի տվյալների վերլուծությունը վկայում է, որ, էներգետիկ արժեքով հաշվարկված, կարևորագույն սննդամթերքների ինքնաբավության մակարդակը 2017 թվականի տվյալներով կազմում է շուրջ 55 %:

Այսպես, մինչ պատերազմը, 2017թ. –ի տվյալներով, առաջնային անհրաժեշտ պարենամթերքների կարևորագույն սննդամթերքի ինքնաբավության մակարդակը կազմել է ցորեն՝ 33,2 %, կարտոֆիլ՝ 102,6 %, բանջարեղեն 102,5 %, պտուղ և հատապտուղ 109,7 %, խաղող 106,4 %, հատիկալնդեղենային մշակաբույսեր 49,7 %, բուսական յուղ 4,3 %, շաքար 65,2 %, ձու 98,2 %, կաթ 91,2 %, տավարի միս 91,5 %, խոզի միս 58,0 %, ոչխարի միս և այծի միս 138,9 %, թռչնի միս 22,5 %, ձուկ 101,8 %:

Երկրից ընդհանուր արտահանման մեջ գյուղատնտեսական ծագման արտադրատեսակների տեսակարար կշիռը 2018 թվականին կազմել է 28.9 %: 2018 թվականին արտահանվել է 697.7 մլն ԱՄՆ դոլարի գյուղատնտեսական ծագման արտադրատեսակներ, որը գերազանցում է նախորդ տարվա ցուցանիշը 8.0 %-ով: 2018 թվականին հանրապետությունից արտահանվել է 163 706.0 տոննա բանջարեղեն, միրգ և կարտոֆիլ, այդ թվում՝ 109322.0 տոննա պտուղ, հատապտուղ և խաղող, որից՝ 15541.0 տոննա խաղող, 50685.0 տոննա բանջարեղեն և 3699.0 տոննա կարտոֆիլ:

2018 թվականին պտուղբանջարեղեն և խաղող վերամշակող ընկերությունների կողմից մթերվել է շուրջ 188.7 հազար տոննա պտուղբանջարեղեն և խաղող, այդ թվում՝ 39.9 հազար տոննա բանջարեղեն, որից՝ 17.9 հազար տոննա լուլիկ, 31.2 հազար տոննա պտուղ և 117.6 հազար տոննա խաղող:

Համաշխարհային տնտեսության գլոբալացման և ինտեգրման ներկա պայմաններում պարենի առկայությունը և անվտանգությունը յուրաքանչյուր պետության ազգային անվտանգության ապահովման հիմնախնդիրներից են: Այսօր բարդ է նշագրել պարենի անվտանգության ապահովման այն նվազագույն շեմը, որը կապահովի բնակչության կենսամակարդակի բնականոն մակարդակը: Երկրի պարենային անվտանգությունը հիմնականում ապահովվում է գյուղատնտեսության, սննդամթերքի արտադրության զարգացման և պարենի ներմուծման միջոցով: Ինչպես աշխարհի մյուս երկրներում, այնպես էլ Հայաստանի Հանրապետությունում առկա է պարենի ապահովության խնդիրը:

Ֆինանսատնտեսական ճգնաժամի և դրա հետևանքների հաղթահարման պայմաններում ՀՀ տնտեսությունը դարձավ բավական խոցելի՝ հաշվի առնելով գործազրկության բարձր մակարդակը, գնաճը և ՀՀ դրամ/ԱՄՆ դոլար փոխարժեքի կտրուկ անկումը: ՀՀ Կենտրոնական բանկը (ԿԲ) և կառավարությունն իրենց լծակներով դրամավարկային և հարկաբյուջետային քաղաքականության իրականացման գործընթացում որպես ուղենիշ (թիրախ) ընտրելով դրամի կայունացումը՝ շղթայական ռեակցիայով ուղղակի և անուղղակի կերպով, շատ

դեպքերում, բացասաբար են ազդել ապրանքների գների, ինչպես նաև արտահանվող ապրանքների իրացումից ստացվող հասույթի (սա միայն արտարժույթի, տվյալ դեպքում՝ ԱՄՆ դոլար/ՀՀ դրամ փոխարժեքի կտրուկ նվազման պարագայում) վրա: Վերոնշյալ երևույթը թողնում է բացասական հետևանքներ նաև ազգաբնակչության լայն շերտերի վրա՝ տնտեսական անվտանգության առումով, քանի որ վերջիններս արտերկրից ստանում են ֆինանսական օգնություն տրանսֆերտների տեսքով (արտարժույթը փոխարկելիս վնասներ են կրում) և միևնույն ժամանակ հանդիսանում են սպառողներ և գնում են պարենը թանկ գներով:

Պարենային անվտանգության ապահովման ոլորտում Հայաստանի Հանրապետության տնտեսական քաղաքականության հիմքն է՝ միջազգային իրավունքի նորմերին համապատասխան, քաղաքացիների լիարժեք սնվելու և սովից զերծ լինելու իրավունքի ապահովումը:

Պարենային անվտանգության ապահովման ոլորտում Հայաստանի Հանրապետության կառավարության քաղաքականության հիմնական խնդիրներն են՝

- սննդամթերքի ֆիզիկական և տնտեսական մատչելիության ապահովումը,
- բնակչության սպառման համար մատակարարվող սննդամթերքի անվտանգության ապահովումը,
- պետական պարենային պահուստի ստեղծումը, պահպանումը և համալրումը:

Սննդամթերքի որակը պետք է համապատասխանի Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին և այլ պահանջներին: Պարենային ճգնաժամի կամ դրա վտանգի դեպքում կառավարությունը սահմանում է պարենային անվտանգության ապահովման հատուկ ռեժիմներ, ընդհուպ՝ սննդամթերքի նորմավորված բաշխումը:

Համաձայն ՀՀ կառավարության 2010 թվականի նոյեմբերի 4-ի N 1476-Ն որոշման՝ ՀՀ գյուղի և գյուղատնտեսության 2010-2020թթ. կայուն զարգացման ռազմավարության փաստաթղթի, որպես պարենային անվտանգության հիմնական ուղղություններ ամրագրված են պարենային ապահովության մակարդակի բարձրացումը, սննդամթերքի անվտանգության և հիմնական պարենային մթերքների ինքնաբավության նվազագույն մակարդակի, ինչպես նաև սննդամթերքի անվտանգության ապահովումը:

Այս ամենը կարևորվում է նրանով, որ ներառվում են այնպիսի հիմնախնդիրների լուծումներ, ինչպիսիք են՝ պարենամթերքի ֆիզիկական և տնտեսական մատչելիության մակարդակի բարձրացման և պարենային անվտանգության ապահովման խնդիրների լուծումը, պարենամթերքի տեղական արտադրության ծավալների ավելացումը և առևտրի հաշվեկշռի բարելավումը, կենսականորեն կարևորագույն պարենամթերքների, մասնավորապես՝ հացամթերքի, բուսական յուղի, շաքարի, մսի, ձկան տեղական արտադրության խթանումը և սահմանված կարգով չնվազեցվող պաշարների ձևավորումը, անասնաբուծության զարգացման նպատակով՝ կերի բազայի ապահովումը: Իսկ սննդամթերքի ապահովումն ընդգրկում է այնպիսի հիմնախնդիրների լուծումը, ինչպիսիք են՝ սննդի միջազգային ստանդարտներին համապատասխանեցման գործընթացները, որոնք կնպաստեն արտահանման դեպքում շուկայում առկա ապրանքների հետ մրցունակության ապահովմանը, օրգանական սննդամթերքի արտադրության զարգացմանը և արտահանմանը և այլն:

Բնականաբար, արդյունքում՝ շատ դեպքերում չկան ազատ շուկայական հարաբերություններ, շուկայում գները չեն ձևավորվում մրցակցության պայմաններում, այլ թելադրվում են հիմնականում ներմուծողների կողմից: Պարենի բավարար ռեսուրսների առկայության կարևոր նախապայմանը գյուղատնտեսական արտադրանքի ապրանքայնության բավարար (բարձր) մակարդակն է: ՀՀ գյուղատնտեսության ճյուղը տարեցտարի զարգանում է՝ նպաստելով թե՛ անասնապահության և թե՛ բուսաբուծության ենթաճյուղերի զարգացմանը, ինչպես նաև համախառն արտադրանքի ավելացմանը:

7. Պարենային ապահովության հիմնախնդիրը աշխարհում

Բնակչության պարենային ապահովումը արդի ժամանակաշրջանի աշխարհում ամենակարևոր մարտահրավերներից մեկն է:

Վիճակագիրները վկայում են, որ մեր թվարկության սկզբին երկրագնդի բնակչությունը կազմել է ընդամենը 300 մլն մարդ: Առաջին հազարամյակի ընթացքում այդ թիվն ավելացել է ընդամենը 30 միլիոնով, բայց երկրորդ հազարամյակի վերջին այդ թիվը հասավ 6 միլիարդի, իսկ 2011 թ. հոկտեմբերի 31-ին անցավ 7 միլիարդի սահմանը: Երկրագնդի բնակչության թիվը այսօր աճում է հսկայական տեմպերով:

Ըստ երկրի բնակչության հաշվիչի տվյալների, 2013 թ. յուրաքանչյուր 0,24 վայրկյանում ծնվել է մեկ երեխա, 1 ժամվա ընթացքում ծնվում է 15218,7 և մահանում 6471,7 մարդ: Դժվար չէ հաշվարկել, որ մեկ օրում բնակչությունն ավելանում է մոտ 210 հազար, իսկ տարվա ընթացքում՝ 76623,7 հազար մարդով:

Բնակչության այսպիսի սրընթաց աճին զուգընթաց՝ գնալով սրվում է պարենային ապահովման հիմնախնդիրը:

ՄԱԿ-ի Պարենի և գյուղատնտեսության կազմակերպության (ՊԳԿ) տվյալներով ներկայումս աշխարհում մոտ 1 մլրդ մարդ սովի է մատնված: Ամեն տարի սովամահ է լինում 18–20 մլն մարդ: Սա նշանակում է, որ պարենային անբավարարությունը որոշ երկրների համար դարձել է ոչ միայն զարգացումն արգելակող, այլև սոցիալական և քաղաքական անկայունություն ծնող լուրջ սպառնալիք: Ավելին, այս հիմնախնդիրը, հատկապես վերջին հինգ տասնամյակում դարձել է այնպիսի գործոն, որն ուղղակիորեն ազդում է՝ պատերազմի և խաղաղության, սոցիալժողովրդագրական, բնապահպանական և էներգետիկական քաղաքականության վրա: Ահա թե ինչու աշխարհի բոլոր երկրների համար բնակչության պարենավորման և պարենային անվտանգության հիմնախնդիրը տնտեսական քաղաքականության ամենակարևոր գերակայությունների շարքում է: Բհարկե, տարբեր երկրներում տարբեր է իրավիճակը, ինչը և պայմանավորում է ամեն մի երկրի սոցիալական ապահովության և ազրարային քաղաքականության բնույթը, ներքին և արտաքին սպառնալիքների հաղթահարման ռազմավարությունն ու գործնական քայլերը: Բոլոր առումներով՝ ազրարային ոլորտի զարգացման դիտարկումը պարենային անվտանգության տեսանկյունից հնարավորություն է ընձեռում ուշադրության կենտրոնում պահելու մարդու սնվելու ամենաառաջնային պահանջմունքը և ձգտելու դրա առավել ամբողջական ու արդյունավետ բավարարմանը:

Շատ կարևոր է համաշխարհային պարենային շուկայի վերջին տասնամյակի զարգացումների և ՀՀ տնտեսության միջազգայնացման համատեքստում հետազոտել ՀՀ պարենային անվտանգության հիմնախնդիրները, շեշտադրել արտաքին և ներքին

սպառնալիքները, ինչպես նաև նախանշել դրանց կարգավորման ու դիմակայման հիմնական ուղիները:

8. Պարենի համաշխարհային շուկան և Հայաստանը

Միջպետական տնտեսական կապերի զարգացումը հանգեցրեց պարենի համաշխարհային շուկայի ձևավորմանը, որտեղ իրականացվում է պարենային ապրանքների առքուվաճառք միջազգային գներով: Վերջիններս ձևավորվում են խոշոր ապրանքային բորսաներում: Որպես կանոն, այս գների հիմքը արտադրության լավագույն պայմաններում կատարված ծախսերն են: Այսպիսի պայմանները բնութագրվում են բնակլիմայական, տեխնոլոգիական և քաղաքական շահեկան առանձնահատկություններով: Այսինքն՝ համաշխարհային գները կանխորոշում են հետևյալ գործոնները.

1. Եղանակային պայմաններ, որոնք ազդում են գյուղատնտեսական մշակաբույսերի բերքատվության, հետևաբար՝ շուկայական առաջարկի վրա:

2. Տարերային աղետներ (երաշտ, ցրտահարություն, ջրհեղեղ, համաճարակներ և այլն), որոնց հետևանքները զգալի են ոչ միայն տվյալ տարվա, այլև հաջորդ մեկ - երկու տարիների բերքի վրա: Այս առումով, բնութագրիչ օրինակ է 2010 թ. երաշտը Ռուսաստանում: Աննախադեպ տաք եղանակային պայմանների պատճառով այդ տարի հացահատիկի բերքը պակասեց 40%-ով և սպասվող 100 մլն տոննայի փոխարեն հավաքվեց ընդամենը 60 մլն տոննա: Վերջինս պատճառ դարձավ Ռուսաստանի կառավարության՝ հացահատիկի արտահանման արգելանքի, ինչը, իր հերթին, ազդեց համաշխարհային առաջարկի ու գների վրա: «Եթե այդպիսի երաշտի էպիկենտրոնը լիներ ոչ թե Մոսկվան, այլ Չիկագոն և ԱՄՆ հացահատիկի արտադրությունը պակասեր 40%-ով, ապա դա կկազմեր 160 մլն տոննա և աշխարհում փոխանցվող պաշարները կբավարարեին ընդամենը 52 օր»:

3. Գյուղատնտեսության սեզոնայնությամբ պայմանավորված՝ պարենային մթերքների գները ցածր են զանգվածային բերքահավաքի շրջանում, իսկ հետագայում մինչև նոր բերքի ստացումը՝ բարձրանում են: Ուստի արտադրության ինտենսիվացումը և հետբերքահավաքային նորամուծական տեխնոլոգիաների ներդրումը, իսկ բանջարեղենի համար նաև ջերմատնային տնտեսությունների զարգացումը, կարևոր գործոններ են գների հարաբերական կայունության ապահովման:

4. Պարենի համաշխարհային շուկայում էական դերակատարություն ունեցող առանձին և խումբ երկրների առևտրային քաղաքականությունը նույնպես իր ազդեցությունն է գործում պարենամթերքի գների վրա: Այս բնագավառում միասնական խաղի կանոններ պահպանելու համար ստեղծվել է Համաշխարհային առևտրի կազմակերպությունը (ՀԱԿ): Սակայն վերջինիս կարգավորիչ գործառույթները միշտ չէ, որ ապահովում են սպասվող արդյունք: Զարգացած, հատկապես ՀԱԿ հիմնադիր անդամ երկրները՝ հաճախակի շրջանցելով առևտրի միջազգային կանոնները, իրենց շահերն են պարտադրում զարգացող երկրներին:

5. Պարենամթերքի գների վրա ազդում է նաև տարբեր երկրների բնակչության կյանքի մակարդակը: Ըստ էության էնգելի օրենքի՝ երկրի զարգացմանը զուգահեռ բնակչության սպառողական ծախսերի մեջ սննդամթերքի մասնաբաժինը պակասում է: Այլ կերպ ասած՝ որքան փոքր է եկամուտը, այնքան մեծ է սննդի վրա կատարվող ծախսերի տեսակարար կշիռը: Այս օրինաչափությունը պարենի համաշխարհային գների վրա ազդում է նրանով, որ բարձր եկամուտ ունեցող երկրներում բարձրորակ

սննդամթերքի ավելի մեծ պահանջարկ է ձևավորվում, ուստի պակասում է ցածրարժեք և ցածրորակ պարենամթերքի առաջարկը:

ՄԱԿ-ի ՊԳԿ-ի տվյալներով՝ պարենի համաշխարհային գների համաթիվը միայն վերջին տասնամյակում ավելացել է մոտ 2.4 անգամ: Պրոֆեսոր Ե. Մերովայի դիտարկումով՝ 20-րդ հարյուրամյակում համաշխարհային պատերազմների միջև ընկած ժամանակահատվածներին հատուկ է եղել պարենային գների իջեցումը և նավթային ճգնաժամի հաղթահարումը:

Հայաստանի արտաքին առևտրում զգալի տեսակարար կշիռ ունեն պարենային ապրանքները:

Բավական լուրջ սպառնալիք է նաև այն հանգամանքը, որ պարենային ճգնաժամի պայմաններում առաջնային կարգով բավարարվում է տնտեսապես հզոր երկրների պահանջարկը: Այսինքն՝ այստեղ նույնպես գործում է վճարունակության գործոնը, և նախապատվությունը տրվում է առավել բարձր գին վճարողին: Համաշխարհային պարենային շուկայի այս առանձնահատկությունը ևս թելադրում է, որ երկրի պարենային ներքին շուկան չի կարող լինել բացառապես ինքնակարգավորվող:

Ավելին, թեկուզ այն հանգամանքը, որ այս շուկային հատուկ է պահանջարկի ցածր և գների բարձր ճկունությունը, արդեն իսկ պահանջում է գործուն պետական կարգավորում, քանի որ դրա բացակայությունը կամ անարդյունավետությունը կարող է հանգեցնել ծանր սոցիալտնտեսական, անգամ՝ քաղաքական հետևանքների: Ահա թե ինչու պարենային ներքին շուկայի կարգավորումը մենք դիտում ենք որպես ազրարային քաղաքականության առանցքային խնդիր, որի լուծումը երկրի պարենային անվտանգության մակարդակի բարձրացման համալիր միջոցառումների իրականացումն է: Նախ՝ բարձրանում են գները և, երկրորդ՝ մեծանում է որակական բարձր հատկանիշներ չունեցող պարենի տեսակարար կշիռը, քանի որ ներմուծողները ցածր վճարունակություն ունեցող սպառողների զանգվածին առաջարկում են գնային առումով մատչելի, բայց ոչ որակյալ սննդամթերք:

Դրա օրինակները շատ են, բայց ամենապատկերավորը 2010 թ. բավական աղմուկ հանած գոմեշի մսի ներմուծումն էր: ՀՀ կառավարության ձեռնարկած միջոցառումների արդյունքում դրությունը որոշ չափով շտկվեց, բայց որակի վերահսկողության գործուն համակարգի բացակայության պայմաններում շարունակվում է ժամկետանց և գենետիկորեն ձևափոխված, ուղեկցող փաստաթղթերին չհամապատասխանող, անթույլատրելի չափերի նիտրատների մնացորդային քանակությամբ սննդամթերքի և գյուղատնտեսական հումքի ներմուծումը: Բազմաթիվ փաստերից առանձնացնենք թուրքական լոլիկի և հորմոնային կերերով ստացված հավի մսի զանգվածային ներմուծումը: Կարծում եմ, ակնհայտ է նաև, որ միայն մենաշնորհի առկայությամբ և վերահսկողության գործուն համակարգի բացակայությամբ է հնարավոր բացատրել ՀՀ շուկայում շաքարի գնի բարձրացման տեսական միտումը,

Անտարակույս, դրա հիմնական պատճառը համաշխարհային գների բարձրացման միտումն է, բայց պակաս ազդեցություն չունի նաև երկրի ներսում իրականացվող տնտեսական քաղաքականությունը: Հայաստանը կալորիականությամբ հաշվարկած՝ սեփական արտադրությամբ ընդամենը 55-60%-ով է բավարարում բնակչության

պարենի պահանջարկը: Ուստի պարենի համաշխարհային շուկայի ոչ շահեկան զարգացումները մեկ անգամ ևս ահագանգում են, որ անհրաժեշտ է մշակել և իրականացնել պարենային անվտանգությանը միտված արդյունավետ ագրարային քաղաքականություն:

9. Կլիմայի փոփոխությունը և պարենային անվտանգությունը

Գյուղատնտեսության արտադրության ճյուղն ամենառիսկայինն է, քանի որ բնակլիմայական անբարենպաստ պայմաններում կրճատվում է բերքատվությունը, ինչպես նաև կենդանիների թերսնման պատճառով՝ մթերատվությունն անասնապահության ոլորտում:

Բնակլիմայական պայմանները ՀՀ-ում անկայուն են, և անբարենպաստ պայմանների դեպքում գյուղատնտեսությունը կրում է խոշոր վնասներ: Այսպես, օրինակ, կարկտահարությունը մեծ վնաս է հասցնում բուսաբուծությանը մի շարք մարզերում: Կարկուտից տուժած գյուղացիական տնտեսությունների ֆերմերներն առևտրային բանկերից վերցրել էին վարկային միջոցներ՝ շրջանառու միջոցներ (սերմացու և այլն) ձեռք բերելու, ինչպես նաև ընթացիկ ծախսերը հոգալու նպատակով, որոնց մարումն իրականացնելու էին իրացված բերքից ստացված միջոցներից: Արդյունքում՝ վերջիններս չկարողացան մարել ընթացիկ պարտավորությունները (մայր գումարի և տոկոսների մարումներ), առաջ եկան սոցիալ-տնտեսական խնդիրներ:

Նշենք, որ մի շարք մարզերում առկա են հակակարկտային կայաններ, որոնք պաշտպանում են կարկտահարությունից, սակայն շատ համայնքներում այդպիսի կայանները բացակայում են, ինչի հետևանքով վնասներն ակնհայտ են: Ներկայումս զարգացած երկրներում կիրառվում են նաև այլ տեխնոլոգիաներ, օրինակ՝ ցանցապատումը. պոլիէթիլենային նյութից ցանցով ծածկում են ծառերը, ինչպես նաև այգիները, որի շնորհիվ կարկտահարության դեպքում վնասներ գրեթե չեն լինում: ՀՀ մի շարք գյուղացիական տնտեսություններում կիրառում են տվյալ փորձը, և արդյունքները բավական դրական են:

Այս առումով կարևոր ենք համարում երկրում կարկտահարային կայանների քանակի ավելացումը և ցանցային տեխնոլոգիայի լայն կիրառումը գյուղացիական տնտեսություններում, ինչը հնարավոր կլինի պետական աջակցությամբ:

ՀՀ պարենային անվտանգության մակարդակը դեռևս գտնվում է ցածր մակարդակի վրա, սակայն զարգացման միտումներն ակնհայտ են, ինչի վառ ապացույցն են տարեցտարի մշակաբույսերի ցանքատարածությունների ավելացումը, անասնաբուծության զարգացումը:

Այստեղ կարևոր է նաև պետության դերը գյուղատնտեսության ճյուղի զարգացման գործում, քանի որ պետական միջամտությամբ երկիր ներմուծվեցին բարձր մթերատու երինջներ և ցլեր, ինչպես նաև բարձր մթերատու հացահատիկային էլիտար սերմեր և բանջարաբուստանային մշակաբույսերի սերմեր, ինչը բարձրացրեց պարենի ապահովվածության մակարդակը:

Ուսումնասիրելով ՀՀ պարենային հաշվեկշիռը կարելի է փաստել, որ ՀՀ ինքնաբավության մակարդակը դեռևս պարենի շատ տեսակների գծով անբավարար է: Որոշ ռեսուրսների սուղ լինելով և հայրենական արտադրության փոքր ծավալներով պայմանավորված, տվյալ տեսականին ներմուծվում է արտերկրից բավական բարձր գներով, և սա խաթարում է հանրապետության թե՛ պարենային և թե՛ տնտեսական անվտանգությունը:

Կարևոր է նաև էկոլոգիապես մաքուր արտադրանքի թողարկման ապահովումը, ինչը, հատկապես հին սարքավորումներով, հնարավոր չէ, ուստի մեկ անգամ ևս հաստատվում է այն գաղափարը, որ տնտեսության իրական հատվածի արդյունավետության բարձրացման հիմնական ուղին առաջատար տեխնոլոգիաների ներդրումը և այդ հիմքի վրա բարձրորակ սննդամթերքի արտադրությունն է:

Պարենային անվտանգության ապահովման տեսանկյունից, կարևոր է նաև բնական պաշարների հավասարակշռված օգտագործումը և շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցությունների կանխարգելումը:

Հայաստանը՝ որպես լեռնային երկիր, որն ունի խիստ արտահայտված ուղղաձիգ գոտիականություն, բավական խոցելի է կլիմայի փոփոխության նկատմամբ: Միանգամայն ակնհայտ է, որ վերջինս առավելապես ազդում է գյուղատնտեսության, հետևաբար՝ երկրի պարենային անվտանգության վրա:

Ոստի, հատկապես վերջին տարիներին, կլիմայի փոփոխության սոցիալտնտեսական հետևանքները գնահատելիս, առանձնակի շեշտադրվում է նաև բնակչության պարենային ապահովության վրա հնարավոր ազդեցությունը:

Այս հիմնախնդիրը դիտարկվում է ոչ միայն առանձին երկրների, այլև տարածաշրջանային և միջազգային ընդգրկումով: Դրա ամենացայտուն օրինակներից է 2002 թ. Յոհաննեսբուրգում 195 երկրների ղեկավարների մասնակցությամբ «Մոլորակի կայուն զարգացման» համաժողովը, որի ընդունած 21-րդ դարի մարտահրավերների ցանկում առանձնակի կարևորվում է ագրոէկոհամակարգում շրջակա միջավայրի պահպանությունը, կլիմայի գլոբալ փոփոխության ռիսկերի կառավարումը, բնական ռեսուրսների խնայողական օգտագործումը և պարենային անվտանգության հիմնախնդրի լուծումը:

Այս հիմնախնդիրներին են ուղղորդված միջազգային հանրության ջանքերը: Հատկապես այդ նպատակին են ծառայում Միավորված Ազգերի զարգացման ծրագրի, ՄԱԿ-ի Պարենի և գյուղատնտեսության կազմակերպության (ՊԳԿ), Համաշխարհային բանկի, Կարմիր խաչի և այլ միջազգային կազմակերպությունների բազմաբնույթ ծրագրերը:

ՀՀ կառավարությունը ևս վերոհիշյալ կազմակերպությունների աջակցությամբ իրականացնում է որոշակի ծրագրեր, որոնց նպատակն է բացահայտել երկրում կլիմայի փոփոխության միտումները և տնտեսության խոցելիությունը, մշակել կլիմայի փոփոխության հետևանքների մեղմացման այնպիսի միջոցառումներ, որոնք թույլ կտան բարձրացնելու հատկապես գյուղատնտեսության հարմարվողականությունը:

Անառարկելի է, որ կլիմայի փոփոխության բացասական դրսևորումների պայմաններում երկրի պարենային անվտանգության ռիսկերը մեծանում են, ուստի պետական կառավարման մարմինների և մասնավոր հատվածի համագործակցության վեկտորը պետք է նպատակաուղղել ագրոպարենային հատվածի մրցունակության բարձրացման և նորամուծական զարգացման շնորհիվ կլիմայի փոփոխության բացասական հետևանքների մեղմացմանը:

Կլիմայի փոփոխության փորձագետների միջկառավարական խումբը (IPCC), որը զբաղվում է կլիմայի գիտական ուսումնասիրությունների համակարգումով, իր ուշադրությունը կենտրոնացրել է հետևյալ երեք խնդիրների վրա.

ա) կլիմայի փոփոխությունների գնահատում, բնական և անտրոպոգեն պատճառների բացահայտում, ինչպես նաև կլիմայի փոփոխության երկարաժամկետ հիմնավորված սցենարների մշակում,

բ) բնության, շրջակա միջավայրի և մարդու տնտեսական գործունեության համար կլիմայի փոփոխության հնարավոր հետևանքների դրական և բացասական ազդեցության գնահատում:

գ) առանձին պետությունների և միջազգային հանրության՝ այդ փոփոխություններին արձագանքելու մարտավարության մշակում՝ բացասական հետևանքները նվազեցնելու և կլիմայի կայունացման հասնելու նպատակով:

ՀՀ Բնապահպանության նախարարությունը և Հայաստանի Կլիմայի փոփոխության տեղեկատվական կենտրոնը ՀՀ կլիմայի փոփոխության առաջին և երկրորդ ազգային հաղորդագրություններում ներկայացրել են բավական համապարփակ վերլուծություն դիտարկվող ժամանակահատվածների կտրվածքով կլիմայի փոփոխության և տնտեսական գործունեության վրա ազդեցության վերաբերյալ, ինչպես նաև կատարել կանխատեսումներ և մշակել զարգացման սցենարներ:

Երկու Ազգային զեկույցներում էլ խոցելիության գնահատման համար ընդունվել է կլիմայի փոփոխության վերաբերյալ IPCC-ի մեթոդաբանությունը և կանխատեսվող սցենարները:

Ի դեպ, առաջին զեկույցում կանխատեսվում է օդի ջերմաստիճանի բարձրացում 2 C0 և մթնոլորտային տեղումների պակասում 10%-ով սցենարը: Այս փաստաթղթում ներկայացվել են ՀՀ տնտեսության զարգացման առանձնահատկությունները 1990–1995 թվականներին, որը, անկասկած, անկախության հռչակումից հետո մեր երկրի ամենադժվարին ժամանակաշրջանն էր:

Երկրորդ զեկույցում անդրադարձ է կատարվել 1995–2006 թթ. տնտեսական զարգացումներին, որը բնութագրվում է նախ՝ տնտեսության կայունացման, իսկ սկսած 2000 թ.՝ զարգացման փուլերով:

Ինչ վերաբերում է գյուղատնտեսության խոցելիության և կլիմայի փոփոխություններին հարմարվողականության միջոցառումներին, ապա առաջին զեկույցում նշված «հողային ֆոնդի օգտագործման բարելավում և ցանքերի կառուցվածքի փոփոխություն, խոնավությունը խնայող տեխնոլոգիաների լայն ներդրում, ռոտովոլ հողերի գոտիական բաշխման վերանայում, առաջավոր ագրոտեխնիկական միջոցառումների կիրառում և նոր բարձրբերքատու ցրտա և չորադիմացկուն մշակաբույսերի ներդրում, արոտավայրերի վերականգնում ու պահպանություն և հոտի ցեղային կազմի բարելավում» հիմնական միջոցառումների մի մասը, թեև ոչ մեծ ծավալներով կատարվել են, բայց դարձյալ մնում են արդիական ու շարունակական:

Ազգային երկրորդ զեկույցի կառուցվածքն ավելի բարելավված է:

Այս փաստաթղթում արձանագրված է «Կլիմայի փոփոխության հետևանքով Հայաստանում հողի խոնավությունը կնվազի 10–30%-ով, գյուղատնտեսական տարբեր մշակաբույսերի խոնավապահովվածությունը՝ 7–13%-ով, հողի ջրային դեֆիցիտը կավելանա 25–30%-ով: Արդյունքում՝ առավել խոցելի կդառնա Հայաստանի նախալեռնային և ստորին լեռնային գոտու անջրդի հողագործությունը: Կլիմայի փոփոխության ընդունված սցենարների համաձայն՝ մինչև 2030 թ.

կանխատեսվում է գյուղատնտեսական հիմնական մշակաբույսերի բերքատվության անկում 8–14%-ով (այդ թվում հացահատիկայիններինը՝ 9–13%-ով, բանջարեղենինը՝ 7–14%-ով, կարտոֆիլինը՝ 8–10%-ով և պտուղներինը՝ 5–8%-ով):

Սպասվում է արոտավայրերի ընդհանուր մակերեսի և նրանց բերքատվության կրճատում 4–10%-ով, այդ թվում՝ ենթալպյան և ավալյան գոտու առավել աժեքավոր արոտավայրերինը՝ 19–22%-ով: Հավանական է խոտհարքների բերքատվության նվազում 7–10%-ով, որն իր հերթին կհանգեցնի կերարտադրության ծավալների կրճատման»:

Այս սպասվելիք փոփոխությունների ազդեցությանը դիմակայելու համար նախատեսվում է իրականացնել հարմարվողականության հետևյալ միջոցառումները.

- ✓ առավել երաշտադիմացկուն, չորադիմացկուն սորտերի և հիբրիդների սելեկցիա և ներդրում, ներառյալ այդ բնութագրերն ունեցող տեղական ավանդական սորտերի պահպանում և տարածում,
- ✓ բարձրլեռնային արոտավայրերի առավել լայն օգտագործում և տեսակարար բեռնվածության կրճատում,
- ✓ պարարտանյութերի կիրառման նորմերի փոփոխություն,
- ✓ հողագործության գոտու տեղաշարժ դեպի բավարար խոնավապահովված շրջաններ,
- ✓ ջրախնայողական ոռոգման տեխնոլոգիաների կիրառում,
- ✓ մշակաբույսերի հիվանդությունների և վնասատուների նկատմամբ կայուն սորտերի ներդրում,
- ✓ հակակարկտային և հակահեղեղային միջոցառումների իրականացում,
- ✓ ՀՎԵ-ների մասին վաղ ահազանգում,
- ✓ գյուղատնտեսական կենդանիների պատվաստումներ և վակցինացում:

Մակայն, արդեն շուրջ երկու տասնամյակ պարարտացման սահմանված նորմաները չեն պահպանվում: Ավելին, եթե ազոտական պարարտանյութերով պարարտացման պահանջը 30–40%-ով բավարարվում է, ապա ֆոսֆորական և կալիումական, առավել ևս՝ միկրոպարարտանյութեր ընդհանրապես հող չի մտցվում: Տեղում միզանյութի և կալիումական պարարտանյութի արտադրության պարբերաբար կրկնվող խոստումները մնում են անհետևանք, իսկ բակտերիալ պարարտանյութերի փոքրածավալ արտադրությունը չի կարող բավարարել, առավել ևս փոխարինել N,P,K-ի պահանջարկին:

Ինչ վերաբերվում է հողագործության գոտու տեղաշարժ դեպի բավարար խոնավապահովված շրջաններ, ձևակերպմանը, ապա ՀՀ-ում ինչպես ոռոգվող, այնպես էլ անջրդի վարելահողերի մոտ 40%-ը անմշակ է, ուստի հիմնախնդիրը ոչ թե խոնավության պակասն է, այլ հողօգտագործման շահադրդման ցածր մակարդակը: Իհարկե, կարևոր է ցանքատարածությունների կառուցվածքում առավել ինտենսիվ և բարձրարժեք մշակաբույսերի տեսակարար կշռի ավելացումը և լեռնային պտղաբուծության զարգացումը:

Գյուղատնտեսության նորաստեղծական զարգացման ուսանելի փորձ կա ձիթապտղի, կիվիի, արքայանարինջի, արևելյան խուրմայի և այլ ջերմասեր պտղատունների հարմարեցման առումով (Մեղրի, Նոյեմբերյան, Արարատ և այլն):

Գնալով ընդլայնվում է ծիրանենու, դեղձենու, կեռասենու և այլ ավանդաբար դաշտավայրային համարվող պտղատեսակների աշխարհագրությունը (Սպիտակ, Վարդենիս, Թալին, Գորիս և այլն):

Նշված օրինակներն անմիջական աղերսներ ունեն կլիմայի փոփոխության երևույթների հետ: Գյուղատնտեսության վրա կլիմայի փոփոխության ազդեցության գնահատման և հարմարվողականության տարբերակների մշակման ուղղությամբ Հարավային Կովկասի երկրներում 2012 թ. բավական հետաքրքիր ծրագիր է իրականացվել Համաշխարհային բանկի Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի (ԵԿԱ) տարածաշրջանային վերլուծողական և խորհրդատվական գործողությունների (ՎԽԳ) հովանու ներքո: Այդ ծրագրերի նպատակն է բացահայտել Հայաստանում կլիմայի փոփոխության առկա վտանգները և խոցելիությունը, գնահատել կլիմայի փոփոխության հնարավոր ազդեցությունը Հարավկովկասյան տարածաշրջանի երկրների գյուղատնտեսական ոլորտի վրա և մշակել կլիմայի փոփոխության հետևանքների կասեցման ռազմավարություն և մեղմացնող այնպիսի միջոցառումներ, որոնք թույլ կտան բարձրացնելու գյուղատնտեսական համակարգի դիմադրողականությունը կլիմայի փոփոխությունների նկատմամբ, մինչև ժամանակ օգտագործելով այդ փոփոխության ընձեռած հնարավորությունները: Ընդհանուր նպատակն է մեծացնել Հարավկովկասյան տարածաշրջանի երկրների կարողությունները կլիմայի փոփոխության հետևանքների կասեցման և մեղմացման ներդաշնակ քաղաքականության, ծրագրերի և ներդրումների իրականացման հարցում և նվազեցնել կլիմայի փոփոխության հետ կապված վտանգները խոցելի խմբերի համար: Այդ նպատակով Հայաստանի տարածքը ըստ ծովի մակերևույթից բարձրության դասակարգվել է 4 խոշորացված գոտիների:

Առաջին գոտին ներառում է մինչև 1000 մ բարձրության տարածքները, երկրորդ գոտին՝ 1001–1700 մ, երրորդ գոտին՝ 1701–2500 մ և չորրորդ գոտին՝ 2500 մ-ից բարձր տարածքները:

ՀՀ գոտիներն ըստ կլիմայի փոփոխության գնահատման.

Իհարկե, նման բաժանմամբ կլիմայի փոփոխության պատկերն ամբողջական և հիմնավոր չի կարող ներկայացվել, սակայն ուսումնասիրության առաջին փուլում, երբ տեխնիկական հնարավորությունները դեռևս սահմանափակ են, կարելի է բավարարվել որպես խոշորացված գոտիների շառավիղում գյուղատնտեսության վրա կլիմայի փոփոխության ազդեցության, հետևաբար նաև՝ պարենային անվտանգության ցուցանիշների փոփոխության գնահատում:

Ի դեպ, ինչպես մասնագիտական, այպես էլ՝ գիտահանրամատչելի հրապարակումներում, առավելապես շեշտադրվում է գյուղատնտեսության վրա կլիմայի փոփոխության բացասական ազդեցությունը:

Կարծիք կա, որ Հայաստանի փոքր, բայց բնակլիմայական և կենսաբազմազանության առումով հարուստ տարածքում կլիմայի փոփոխությունը, հատկապես՝ գլոբալ տաքացումը, կարող է ունենալ նաև դրական արդյունքներ:

Գյուղատնտեսության վրա կլիմայի փոփոխության ազդեցությունը, բացասական և դրական հողերի բերրիության նվազումը, վեգետացիայի համար բարենպաստ ժամկետի երկարումը, ջրային պաշարների նվազում, բարձրաժժեք ջերմասեր մշակաբույսերի աշխարհագրության ընդլայնումը, մշակաբույսերի բերքատվության իջեցումը, մեկից ավելի բերքի ստացման հնարավորություն, բույսերի հիվանդությունների տարածումը, գյուղատնտեսական կենդանիների, դաշտային մշակաբույսերի և պտղատուների ձմեռացման նպաստավոր պայմանները, կենդանիների հիվանդացության մեծացումը, մթնոլորտային CO₂-ի ավելացման շնորհիվ մշակաբույսերի բերքատվության բարձրացումը, հիդրոօդերևութաբանական վնասակար երևույթների հաճախակիությունը, գյուղատնտեսական կենդանիների արածեցման տևողության ավելացումը, հանրապետության 10 մարզերում ՀՀ գյուղատնտեսության նախարարության, գյուղատնտեսական աջակցության մարզային կենտրոնների (ԳԱՄԿ) միջոցով կատարված հարցումների արդյունքները վկայում են, որ հարցման մասնակից մասնագետների և արտադրողների 72% նկատում է գյուղատնտեսական արտադրության վրա կլիմայի փոփոխության ազդեցությունը, իսկ 85%-ը ՀՎԵ կանխարգելման և գյուղատնտեսության հարմարվողականության ծրագրերն ու միջոցառումները համարում է ոչ բավարար:

Գյուղատնտեսությանը հատկապես մեծ վնաս են հասցնում երաշտը, կարկուտը, հեղեղումները, գարնանային ցրտահարությունները և սելավները:

Վերջին տարիներին գյուղատնտեսական մշակաբույսերի ցանքատարածությունների կառուցվածքում ավելանում է բարձրաժժեք մշակաբույսերի տեսակարար կշիռը, ուստի մեծանում է նաև նույն տարածքին բնական աղետների պատճառած վնասի գումարը:

Գրեթե յուրաքանչյուր տարի Հայաստանի մեկ կամ մեկից ավելի տարածքներում երաշտ է գրանցվում: 2000–2001 թթ. սաստիկ երաշտի հետևանքով գյուղատնտեսության վնասը կազմեց 143 մլն. ԱՄՆ դոլար: Անբարենպաստ կլիմայական պայմանների հետևանքով միայն 2010 թ. գյուղատնտեսության ճյուղի վնասը կազմեց մոտ 90 մլն. ԱՄՆ դոլար:

Օրինակ, գյուղատնտեսությանը հատկապես մեծ կորուստներ պատճառեց 2013 թ. մայիս-հունիս ամիսներին Արմավիրի, Արագածոտնի, Շիրակի, Լոռվա, Գեղարքունիքի, Սյունիքի և Տավուշի մարզերում հաճախակի և տևական կարկտահարության երևույթները: Ուղղակի աննախադեպ էր ՀՀ Արմավիրի մարզի վարչական տարածքում 2013 թ. մայիսի 12-ի և մայիսի 17-ի կարկտահարությունը:

ՀՀ կառավարության միջգերատեսչական հանձնաժողովի ուսումնասիրություններով՝ մարզի 46 գյուղական համայնքներում ավելի քան 11,1 հազ. հա ցանքերի և այգիների բերքը վնասվել է 50–100 տոկոսով, տուժած հողօգտագործողների թիվը 12,8 հազ. մարդ է, իսկ հասցված վնասը նախնական հաշվարկներով կազմում է մոտ 24 մլրդ դրամ կամ 58,5 մլն ԱՄՆ դոլար:

Տուժած գյուղացիներին օգնելու նպատակով ՀՀ կառավարությունը և դոնոր համայնքը ձեռնարկեցին որոշակի միջոցներ: Մասնավորապես, բանջարանոցային և կերային մշակաբույսերի նոր ցանք կատարելու համար տրամադրվել է սերմացու, դոլարային վարկերը վերահաշվարկվելու են դրամի, և տարբերությունը վճարելու է պետությունը, վարկերի տոկոսա-դրույքը սուբսիդավորվելու է, համայնքներում

տեղադրվելու են հակակարկտային տեղակայանքներ, հասկացվելու է պարարտանյութեր և դիզելային վառելիք:

Բացի դրանից սեփական հողատարածության վրա վնասված ցանքատարածությունների վերականգման աշխատանքների դիմաց ՀՀ աշխատանքի և սոցիալական ապահովության նախարարությունը սահմանված կարգով վճարում է աշխատավարձ:

Կլիմայի փոփոխությունն ուղղակի ազդեցություն է գործում բնական կերահանդակների արոտավայրերի և խոտհարքերի վրա:

Արոտային շրջանում գյուղացիական տնտեսությունները բնական կերահանդակներից ստանում են տարեկան արտադրվող կաթի շուրջ 70 տոկոսը, մսի կեսից ավելին, բրդի ողջ քանակը: Բնական արոտների կարևորությունը շեշտադրվում է նաև այն առումով, որ երկրում բուծվող խոշոր և մանր եղջերավոր անասունների ցեղերը համապատասխանում են լեռնային և բարձր լեռնային արոտներին:

Ուսումնասիրությունները վկայում են, որ անհրաժեշտ է առանձնահատուկ ուշադրություն դարձնել արոտավայրերի պահպանմանը, բարելավմանը և օգտագործմանը:

Կլիմայի փոփոխության ազդեցությունն ավելի բացասաբար է ազդում, երբ չեն իրականացվում արոտների բարելավման միջոցառումներ, խախտվում են արածեցման ժամկետները և հաջորդափոխությունը: Հատկապես վերջին երկու տասնամյակում ոչ համակարգված արածեցման, հսկողության բացակայության և բարելավման միջոցառումների անտեսման պատճառով խիստ վատացել է արոտավայրերի վիճակը:

Բավական է ուշադիր նայել հատկապես գյուղամերձ լանջերին և կտեսնենք բուսածածկից զրկված արահետների աստիճաններ, որոնք գերարածեցման և ոտնահարման արդյունք են:

Վիճակը բարվոք չէ նաև հեռագնա արոտավայրերում:

Կանխատեսումը ցույց է տալիս, որ կլիմայի փոփոխության բացասական ազդեցությունը չկանխարգելելու պարագայում, բնական գոտիների տեղաշարժի հետևանքով՝ առավել բարձրարժեք՝ ալպյան և ենթալպյան արոտավայրերի տարածությունը կկրճատվի համապատասխանաբար՝ 19 և 22 տոկոսով: Միաժամանակ կավելանա կիսաանապատային (17%) և մարգագետնյատափաստանային (23%) համեմատաբար ցածր արտադրողական արոտավայրերի տարածությունը:

Հետևաբար, բնական գոտիների կառուցվածքային փոփոխությունների պատճառով կաթի արտադրություն կպակասի մոտ 52.4 հազ. տոննայով կամ 7.3 մլրդ դրամով: Նույն մեթոդիկայով, կանխատեսվում է, որ մսի արտադրությունը կպակասի 15.1 հազ. տոննայով կամ մոտ 35 մլրդ դրամով, իսկ բրդի արտադրությունը՝ 116.4 տոննայով կամ 0.2 մլրդ դրամով:

Հայաստանի հատկապես լեռնային և բարձր լեռնային համայնքների բնակչության եկամտի գերակշռող մասն ապահովում է անասնաբուծությունը: Ուստի կանխատեսելի է, որ այլ հավասար պայմաններում, կլիմայի փոփոխության հետևանքով գյուղացիական տնտեսությունները միայն նշված երեք արտադրանքների թերարտադրությունից տարեկան կկորցնեն ավելի քան 42 մլրդ դրամի համախառն

արտադրանք: Նման իրավիճակում գյուղացին, զրկվելով եկամտից, որպես կանոն, արտագաղթում է:

Այսինքն՝ գյուղատնտեսությունը կորցնում է արտադրողին և էլ ավելի են սրվում բնակչության սոցիալական հիմնախնդիրները: Տարբեր առիթներով շեշտադրել եմ այն միտքը, որ գյուղատնտեսական արտադրությունը գործարարության դասական պատկերացումից տարբերվում է: Սովորաբար որևէ ձեռնարկատեր ցածր եկամտաբերության կամ սնանկացման վտանգի դեպքում փոխում է գործարարության ուղղվածությունը կամ դուրս է գալիս գործարարության ոլորտից: Բոլորովին այլ, և առավել դրամատիկ պատկեր է գյուղատնտեսության ասպարեզում:

Գյուղատնտեսական գործունեությունից բավարար եկամուտ չստացող, տարբեր ռիսկերի հետևանքով (կարկտահարություն, ցրտահարություն, համաճարակ և այլն) ինչպես տվյալ տարվա, այնպես էլ հաջորդ 1–2 տարիների բերքը կորցնող գյուղացին, բավարար աջակցության բացակայության դեպքում, հարկադրված է ոչ միայն հրաժարվել արտադրությունից, այլև հեռանալ գյուղատնտեսությունից ու գյուղից:

Վերջին տարիներին ակտիվացող գյուղական բնակչության արտահոսքը հաստատում է այս ճշմարտությունը:

Կլիմայի փոփոխությունը, հատկապես ջերմաստիճանի բարձրացման և մթնոլորտային տեղումների նվազման հետևանքով՝ անապատացման գործընթացի ակտիվացումը, բացասաբար է անդրադառնում կենդանիների առողջության վրա:

Մասնագետների կանխատեսումները վկայում են, որ ջերմաստիճանի բարձրացման հետևանքով զգալիորեն կմեծանա պիրոպլազմիդոզների, մաշկային և վիսցերալ լեյշմանիոզների, դիբրոֆիլարիոզների, անկիլոստոմիդոզների և այլ հիվանդությունների ռիսկերը: Ենթադրվում է, որ հատկապես պիրոպլազմիդոզները, որոնք նախկինում բնորոշ էին հանրապետության ցածրադիր շրջաններին, կարող են տարածում գտնել նախալեռնային և միջին լեռնային գոտիներում:

Կլիմայի փոփոխության պայմաններում, եթե հարմարվողականության համապատասխան միջոցառումներ չձեռնարկվեն, ապա զգալիորեն կմեծանա գյուղատնտեսության խոցելիությունը, որի հետևանքով կարող է սրվել երկրի պարենային անվտանգության հիմնախնդիրը:

Միջազգային փորձը վկայում է, որ գյուղատնտեսության վրա կլիմայի փոփոխության բացասական գործոնների ազդեցության հետևանքները համեմատաբար ավելի անվնաս են լինում արդիական տեխնոլոգիաներ և կառավարման արդյունավետ համակարգ ունեցող երկրներում:

Առանձնահատուկ կարևորություն է ստանում գյուղատնտեսության արտադրական ռեսուրսների ռացիոնալ օգտագործման և նորաստեղծական զարգացման ծրագրերի իրականացումը: Այս քաղաքականության շրջանակներում առանձնահատուկ կարևորություն ունեն միջազգային հանրության օգնությամբ և ՀՀ կառավարության՝ գյուղատնտեսության պետական աջակցության նպատակով իրականացվող ծրագրերը:

Գյուղատնտեսության ոլորտի գիտական կազմակերպությունները, համագործակցելով Գյուղատնտեսական հետազոտությունների միջազգային խորհրդատվական խմբի (CGIAR) կենտրոնների, մասնավորապես՝ ICARDA-ի և SIMMIT-ի հետ, սելեկցիոն աշխատանքներ են իրականացնում մշակաբույսերի

համաշխարհային հավաքածուի նմուշներից ՀՀ պայմաններին հարմարեցված սորտերի ու գծերի ստացման ուղղությամբ:

Ներկայումս Բանջարաբուստանային և տեխնիկական մշակաբույսերի գիտական կենտրոնի բույսերի կենսատեխնոլոգիայի լաբորատորիայում աշխատանքներ են կատարվում հիմնական գյուղատնտեսական մշակաբույսերի նոր սորտերի ստացման համար:

Կենսատեխնոլոգիայի մեթոդները թույլ են տալիս կարճ ժամանակահատվածում ստանալու բույսերի նոր գծեր, որոնք առանձնանում են բարձր բերքատվությամբ, աբիոտիկ գործոնների նկատմամբ կայունությամբ /ադադիմացկուն, չորադիմացկուն և այլն/: Որպես ելանյութ օգտագործվում են տեղական պոմիդորի, տաքդեղի, ընդավորների /ուլոռ, սոյա/ սորտերը. դրանք ավելի հարմարված դարձնելու համար փոփոխվող կլիմայական պայմաններին:

Կենսատեխնոլոգիայի մեթոդները, ի տարբերություն ավանդական սելեկցիայի մեթոդի, թույլ է տալիս ավելի արագ և արդյունավետ ստանալու ցանկալի արդյունք:

Այս մոտեցումը ինտենսիվ փոփոխվող բնակլիմայական պայմանների դեպքում ավելի արդյունավետ է:

Բանջարաբուստանային մշակաբույսերի տեղական սորտերը, ի տարբերություն ներմուծված սորտերի, դիմացկուն և կայուն են Հայաստանի բնակլիմայական պայմաններին, ավելի հեշտ են դիմակայում եղանակային փոփոխություններին: Տեղական պոմիդորի, տաքդեղի որոշ սորտեր ունեն դիմացկունության լայն սպեկտր հողի և օդի խոնավության նվազման նկատմամբ, իսկ բարձր ջերմաստիճանի և չոր կլիմայի պայմաններում դարձել են ավելի բերքատու և արտադրական տեսակետից առավել հետաքրքրական: Վերջին տարիներին ագրարային ոլորտի մրցունակությանը և կլիմայի փոփոխության հարմարվողականությանը զգալիորեն նպաստեցին Համաշխարհային բանկի (WB), Գյուղատնտեսության զարգացման միջազգային հիմնադրամի (IFAD) վարկային ու դրամաշնորհային միջոցներով, ինչպես նաև ԱՄՆ-ի, Ճապոնիայի, Չինաստանի, Հնդկաստանի և այլ երկրների օգնությամբ գյուղատնտեսության կարողությունների հզորացումը:

Հատկապես ոռոգման համակարգերի, բարձրարժեք գյուղատնտեսության և հետբերքահավաքային ենթակառուցվածքների զարգացման համար կարևոր նշանակություն ունեցավ «Հազարամյակի մարտահրավերներ» ծրագիրը: 2011 թ. ավարտվեց ոռոգման համակարգերի վերականգնմանն ու ինստիտուցիոնալ զարգացմանն ուղղված հայաստանյան ծրագիրը՝ 108 մլն ԱՄՆ դոլարին համարժեք դրամի արժողությամբ: Ծրագրով նախատեսվել և իրականացվել են մի շարք միջոցառումներ, ջրանցքների, ներհամայնքային ոռոգման ցանցերի, պոմպակայանների, մայր ջրանցքների վերանորոգման և կառուցման աշխատանքներ: Ծրագրի շրջանակներում իրականացվել են նաև մի շարք ինստիտուցիոնալ միջոցառումներ, այդ թվում՝ ջրօգտագործողների ընկերությունների անձնակազմի ուսուցում, օրենսդրական բարեփոխումներ, նախատեսվող կառուցվածքային բարեփոխումներին աջակցություն և այլն: Ըստ հողային հաշվեկշռի վերջին տվյալների հանրապետությունում ոռոգվում է 207,8 հազ. հա հողատարածություն, որից գյուղատնտեսական հողերը կազմում են 154,0 հազ. հա, ներառյալ՝ 120,0 հազ. հա վարելահողեր, 32,6 հա բազմամյա տնկարկներ և 1,5

հազ. հա արոտավայրեր: Ոռոգվում են նաև մոտ 53,0 հազ. հա տնամերձ և այգեգործական ընկերությունների հողեր և 400 հա անտառներ:

Առաջիկա տասնամյակի համար նախատեսվում է՝

- ✓ մեծացնել ոռոգման համակարգի պահպանման հուսալիությունն ու արդյունավետությունը, նվազեցնել ոռոգման ջրի կորուստները, բարելավել ջրի որակը և կոլեկտորային ջրահեռացման ծառայությունները,
- ✓ վերականգնել և արդիականացնել ոռոգման համակարգերը և համայնքների ոռոգման ներքին ցանցը,
- ✓ բարելավել ջրային համակարգի կառավարումը և հասարակություն-պետություն գործընկերային հարաբերությունները:

Այս գերակայությունների շրջանակներում իրականացվող ծրագրերը պետք է նպաստեն գյուղատնտեսական կազմակերպությունների բնական ռիսկերի, այդ թվում՝ կլիմայի փոփոխության ռիսկերի կառավարմանը և ապահովեն ոռոգման համակարգի հիմնական նպատակային ցուցանիշներ:

Գյուղացիական տնտեսությունների կարողությունների հզորացումը և կոոպերացիայի զարգացումը նույնպես կարևոր միջոց են կլիմայի փոփոխության պայմաններում գյուղատնտեսության հարմարվողականության բարձրացման համար: Այս տեսանկյունից որոշակի պետական աջակցություն է ցուցաբերվում նաև գյուղատնտեսական կոոպերատիվների ստեղծմանը: Վերջին տարիներին այդպիսի ծրագրեր են իրականացվել ԱՄՆ Գյուղդեպարտամենտի հայաստանյան գրասենյակի, Ագրոբիզնեսի և գյուղի զարգացման հիմնադրամի, Գյուղատնտեսության զարգացման միջազգային հիմնադրամի, Հազարամյակի մարտահրավերներ ծրագրի, Համաշխարհային բանկի «Համայնքների գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման և մրցունակության ծրագրի» (ՀԳՌԿՄԾ) շրջանակներում:

ՀՀ-ի համար կարևոր ձեռքբերում է, որ 2013 թ. առաջին անգամ ՀՀ Արտակարգ իրավիճակների նախարարության Հայիպետիկոորմենտի և ՀՀ գյուղատնտեսության նախարարության համագործակցությամբ, ՄԱԿ-ի ՊԳԿ -ի մեթոդաբանությամբ կատարվել է ՀՀ Արարատի և Արմավիրի մարզերի խաղողի և ծիրանի բերքատվության կանխատեսում: Վերջինս նպատակաուղղված է կլիմայի փոփոխության պայմաններում գյուղատնտեսության հարմարվողականության բարելավմանը, երկրի պարենային անվտանգության բնագավառում հավաքվող տվյալների որակի բարձրացմանը և օպերատիվ տարածմանը:

Ներկայումս կլիմայի փոփոխություններին գյուղատնտեսության հարմարվողականության համար նպաստավոր ծրագրեր են իրականացվում նաև տեղական և միջազգային մի շարք կազմակերպություններ:

Նշենք առավել արդյունավետ գործունեություն իրականացնող կազմակերպությունները: «Ագրոբիզնեսի և գյուղի զարգացման կենտրոն» հիմնադրամ (ԱԳԶԿ-CARD):

ԱԳԶԿ-ի առաքելությունն է աջակցել ֆերմերներին և ագրովերամշակող կազմակերպություններին գյուղատնտեսական և ագրովերամշակման արտադրանքների արտադրության և իրացման, եկամուտների ավելացման, աշխատատեղերի ստեղծման, վերջին հաշվով՝ գյուղական բնակչության աղքատության հաղթահարման նպատակով: ԱԳԶԿ-ն առաջարկում է

գյուղատնտեսության զարգացման ծառայությունների շուկայամետ և ֆերմերի կարողությունների զարգացմանը նպաստող համակողմանի, միասնական փաթեթ: Կենտրոնի ցուցաբերած աջակցությունը խթանում է ագրոբիզնեսի զարգացմանը՝ ներառելով մարքետինգի, գյուղի զարգացման և ֆինանսական ծառայությունները:

* * *

Սույն հետազոտությունը պատրաստվել է Եվրոպական միության աջակցությամբ:
Սույն հետազոտության բովանդակությունը բացառապես հեղինակի կարծիքն է և
կարող է չարտացոլել Եվրոպական միության տեսակետը

Օգտագործված գրականություն

1. «Պարենային անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքը,
2. Հայաստանի Հանրապետության պարենային անվտանգության հայեցակարգից բխող միջոցառումների ծրագիրը,
3. Հայաստանի Հանրապետություն: Կուտակում, մրցակցություն և միակցելիություն: Հուլիս 2013 թ., Համաշխարհային բանկ,
4. «Հայաստանի Հանրապետության գյուղի և գյուղատնտեսության 2010–2020 թվականների կայուն զարգացման ռազմավարությունը և Հայաստանի Հանրապետության գյուղի և գյուղատնտեսության 2010–2020 թվականների կայուն զարգացման ռազմավարության կատարումն ապահովող միջոցառումների ցանկը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 2010 թ. նոյեմբերի 4-ի N 1476 -Ն որոշումը,
5. «ՀՀ պարենային անվտանգության ապահովման հայեցակարգը»,
6. «Հայաստանի Հանրապետության պարենային անվտանգության հայեցակարգից բխող միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 2011 թ. հոկտեմբերի 13-ի թիվ 1522-Ն որոշումը,
7. Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ռազմավարությունը
8. ՀՀ օրենքը պարենային անվտանգության ապահովման մասին,
9. Ավետիսյան Ս., Հայաստանի Հանրապետության ագրարային շուկայի ձևավորման հիմնախնդիրները անցումային տնտեսության պայմաններում,
10. Ավետիսյան, Հայաստանի գյուղատնտեսությունը և ագրովերամշակումը,
11. Բայադյան Ա. Հ., ՀՀ գյուղատնտեսական արտադրության զարգացման հիմնախնդիրները և դրանց լուծման ուղիները,
12. Գրիգորյան Կ. Ա., Պարենային անվտանգության ապահովման և աղքատության նվազեցման հիմնախնդիրների լուծման ուղիները ՀՀ-ում:

Թերթի, կայքի հոդված՝

https://168.am/2023/09/02/1921685.html?fbclid=IwAR36pJrceZrHh_sTYV1_p91Nb3m7OhZ_zjAk2B4_l5yXsuu4L5ir9-KM_OBU

“2021 թվականից մեր երկիրը կանգնած է պարենային անվտանգության լուրջ մարտահրավերի առջև. ահազանգում է մասնագետը”

հղումներ

https://www.armstat.am/file/article/f_sec_1_2023_3.pdf
https://www.armstat.am/file/article/29_gt_2022.pdf
<https://www.armstat.am/am/?nid=82&id=2569>
<http://www.usda.gov/wps/portal/usda/usdahome>
<https://mineconomy.am/news/2051>
<https://www.mineconomy.am/page/1333>
https://hy.wikipedia.org/wiki/%D5%80%D5%A1%D5%B5%D5%A1%D5%BD%D5%BF%D5%A1%D5%B6%D5%AB_%D5%B0%D5%B8%D5%B2%D5%A1%D5%B5%D5%AB%D5%B6_%D5%BC%D5%A5%D5%BD%D5%B8%D6%82%D6%80%D5%BD%D5%B6%D5%A5%D6%80
https://hy.wikipedia.org/wiki/%D5%80%D5%A1%D5%B5%D5%A1%D5%BD%D5%BF%D5%A1%D5%B6%D5%AB_%D5%BF%D5%B6%D5%BF%D5%A5%D5%BD%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6
https://hy.wikipedia.org/wiki/%D5%8D%D5%BA%D5%A1%D5%BC%D5%B8%D5%B2%D5%A1%D5%AF%D5%A1%D5%B6_%D5%A6%D5%A1%D5%B4%D5%A2%D5%B5%D5%B8%D6%82%D5%B2
<https://armenpress.am/arm/news/1076258/>
http://www.noravank.am/upload/pdf/8.Ashot_Markosyan_21_DAR_06_2013.pdf
http://www.noravank.am/upload/pdf/102_am.pdf
https://asue.am/upload/files/amberd-economic-policy/Avetisyan_S.pdf
<https://armlur.am/1286079/?fbclid=IwAR04QXSVIRZpszoGVrBwQSuNgQCwyEm8zw0SDqdy1PxshjMBCwTuXDZQOy4>
<http://micextrader.ru/analitika/factory-vliyayushhie-na-stoimost-pshenicy.html>
<https://b24.am/economy/52982.html>
<https://www.aravot.am/2023/02/07/1321956/>
<https://www.employers.am/am/projects/assessment-of-food-security-system-of-armenia-am>
https://usum.am/ld/33/3335_Avetisyan_S.pdf
<http://www.irtek.am/views/act.aspx?aid=16891>
<https://www.panarmenian.net/m/arm/details/101206>
<https://policycommons.net/artifacts/1562647/5-hayastani-hanrapetowtyan-parenayin-anvtangowtyan-hratap-khndirner/2252440/>
<https://armeniasputnik.am/20230207/kensatvoshakarunery-aghqatutjunic-durs-galu-hnaravorutjun-chunen-qtvojan-55002096.html>
<https://168.am/2023/02/07/1829500.html>
<https://www.1lurer.am/hy/2022/02/22/>
<https://mineconomy.am/news/2501>
<https://mediafactory.am/our-products/food-security>
<https://eic.am/hy/tag/parenayin-anvtangutyun>
<https://evnreport.com/arm/magazine-issues/armenias-food-security/>

ՑԱՆԿ

1. Հետազոտության նկարագիրը և հիմնավորումը	Էջ 1
2. Պարենային անվտանգության ապահովման խնդիրները ՀՀ –ում	2
3. Հայաստանում արտադրվող, բնակչության համար առաջնային անհրաժեշտության մի քանի պարենամթերքների արտադրության վիճակի հետ կապված ուսումնասիրություններ	6
4. Հայաստանի Հանրապետություն պարենամթերքի ներմուծում և Հայաստանի Հանրապետությունից պարենամթերքի արտահանում	24
5. Հայաստանի Հանրապետության ազգային պարենային հաշվեկշիռ	27
6. Հայաստանի Հանրապետությունում պարենամթերքի անվտանգության ապահովման խնդրի բարելավման հետ կապված առաջարկություններ	48
7. Պարենային ապահովության հիմնախնդիրը աշխարհում	56
8. Պարենի համաշխարհային շուկան և Հայաստանը	57
9. Կլիմայի փոփոխությունը և պարենային անվտանգությունը	59
10. Օգտագործված գրականություն	70
11. Հղումներ	71
12. Ցանկ	72